ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.: (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 4 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1720: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 26 ՄԱՅԻՍԻ 2016Թ.
№ 17 (393)

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

19 մայիսի 2016թ., Գողթանսար (Սոյուխ)

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

Մեղրի-Նախիջեւան սահմանագծի իշխող բարձունքներում հայ մարտիկների փիրական ներկայությունն է

Մեղրու շրջանի եւ Նախիջեւանի տարածաշրջանի միջեւ ձգվող հայ-ադրբեջանական պետական սահմանի եւ այնտեղ տիրող իրավիճակի մասին հիմնավոր պատկերացում կարելի է կազմել Զանգեզուրի լեռնաշղթայի՝ այդ հատվածում գտնվող կատարներին լինելուց հետո:

Առաջնագիծ գնալու հավելյալ պատճառներ էլ կային: Նախ՝ վերջին մեկուկես ամսում շրջանառվում էր Նախիջեւանի տարածքում՝ Հայաստանի սահմանին մերձ, կատարվող զորաշարժերի, զինական տեխնիկայի կուտակումների մասին խոսակցություն: Մյուս կողմից՝ Արցախյան 2-րդ պատերազմի օրերին եւ հաջորդած ժամանակաշրջանում, օրինաչափորեն, բոլորիս ուշադրության կենտրոնում դարաբաղա-ադրբեջանական շփման գիծն էր: Եվ հետո՝ ինչ-որ ասեկոսեներ էին համառորեն շրջանառվում՝ կապված ադրբեջանական դիրքերի՝ մեզ համար անցանկալի փոփոխության հետ:

2

Գողթան փուն. այդքան մոտ ու այդչափ հեռու...

Մայիսի 19-ին «Սյունյաց երկրի» ստեղծագործական խումբը (Սամվել Ալեքսանյան, Վահրամ Օրբելյան եւ Համլետ Գեւորգյան) հայ-ադրբեջանական պետական սահմանի Մեղրի-Նախիջեւան հատվածում էր՝ ավելի ստույգ՝ Գողթանսարում, որ նաեւ Սոյուխ է կոչվում (բարձրությունը՝ 3143մ):

Սահմանագիծ կատարած այցն այս օրերին համահունչ նպատակ ուներ՝ ծանոթանալ մեր պաշտպանական դիրքերին:

Եվ երբ արդեն քարափի գլխին էինք, մեր առջեւ բացվեց զարմանալի, հայրենականչ Գողթան աշխարհը, որ հիմա Օրդուբադ է կոչվում՝ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության կազմում: Ու այնքան մոտ էր, այնքան տեսանելի, որ, կարծես, մեր ափի մեջ լիներ…

Լսել էինք, որ Գողթանսարի մեր դիրքերից Օրդուբադը՝ մերձակայքով, երեւում է, բայց չէինք պատկերացրել, որ տեսարանն այդքան պարզորոշ կլինի:

Դժվար էր նայել ու չհիանալ, ոգեղենացված ներշնչանք չապրել, ու նաեւ ափսոսանք ու ցավ չապրել:

Եվ անկարելի էր մտովի չտեղափոխվել պատմության խորքերը…

Նախ Արաքս գետն է ուշադրություն գրավում՝ արեւմուտքից հարավ-արեւելք ձգվող՝ դանդաղ, պղտոր ընթացքով: Եվ այդպես մտնում է աստիճանաբար խորացող Մեղրու կիրճ: Մայր գետի վտակներից ուշագրավ է միայն աջից Արաքսին միացող մի ջրառատ ու ոչ պակաս տղմոտ գետ, որի ստույգ անվանումը չկարողացանք պարզել:

Արաքսն այդտեղ եւս պետական սահման է՝ Իրանի Իսլամական Հանրապետության եւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության միջեւ. դեռեւս 1828թ. որոշարկված ռուս-պարսկական սահմանն է:

Ամենահեռվում, թեեւ աղոտ, երեւում է Օձալեռը (Օձասարը), որին ադրբեջանցիներն Իլանդաղ են անվանում: Նախիջեւան քաղաքից 20-25կմ հեռավորության լեռը (բարձրությունը՝ 2385մ) հմայիչ տեսք ունի՝ սյունաձեւ, սլացիկ:

Օձասար (Իլանդաղ)

Ժողովրդական շատ ավանդույթներ ու առասպելներ կան այդ լեռան մասին: Ավանդույթներից մեկը պատմում է, որ այն-

էջ 3

…Ð³ÛáóÃ³½· ³ÛÇÝ Ëáñ Ñáõñ¹Ý Çñ»Ý Ñ³Ûï³ñ³ñáõÙ ¿ Ñ³ÛÏ³Ï³Ý ·³í³éÝ»ñÇ ·»ñ³·áõÛÝ »õ ÙÇ³Ï ÇßË³ÝáõÃÛáõÝ:

Ð²Úà ò²¼¶²ÚÆÜ Êà ðÐà ô ð 30 Ù³ÛÇëÇ 1918Ã.

Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարի, Ամերիկայի Միացյալ Նահանգների պետքարտուղարի ու Ֆրանսիայի եվրոպական հարցերով պետքարտուղարի համատեղ հայտարարությունը

Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը, Ամերիկայի Միացյալ Նահանգների պետքարտուղար Ջոն Քերին ու Ֆրանսիայի եվրոպական հարցերով պետքարտուղար Հարլեմ Դեզիրը, ներկայացնելով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրները, այսօր Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման հարցով հանդիպում ունեցան Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ:

Նրանք վերահաստատեցին, որ հակամարտությունը ռազմական լուծում չի կարող ունենալ: Համանախագահները շեշտադրեցին 1994 եւ 1995թթ. հրադադարի համաձայնագրերը հարգելու կարեւորությունը:

Նախագահները վերահաստատեցին հրադադարի պահպանման ու հակամարտության խաղաղ կարգավորման շուրջ իրենց հանձնառությունը: Հետագա բռնությունների ռիսկը կրճատելու համար նրանք համաձայնեցին հնարավորինս սեղմ ժամկետում համաձայնեցնել ԵԱՀԿ հետաքննությունների մեխանիզմի մանրամասները: Նախագահները նաեւ համաձայնեցին ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի գոյություն ունեցող գրասենյակի ընդլայնմանը: Ի վերջո, նրանք համաձայնեցին ԿԽՄԿ-ի հովանու ներքո շարունակել տվյալների փոխանակումը անհայտ կորածների վերաբերյալ, որի շուրջ նախագահները պայմանավորվածություն էին ձեռք բերել 2014թ. հոկտեմբերին Փարիզում կայացած գագաթնաժողովի ընթացքում:

Նախագահները համաձայնության եկան բանակցային հաջորդ փուլի վերաբերյալ, որը կկայանա հունիսին կողմերի համաձայնությամբ ընտրված վայրում՝ նպատակ ունենալով վերսկսել բանակցությունները համակողմանի կարգավորման շուրջ:

17 մայիսի 2016թ.

Մեղրի-Նախիջեւան սահմանագծի իշխող բարձունքներում հայ մարտիկների տիրական ներկայությունն է

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

էջ 1

Ագարակ քաղաքից Գողթանսար (Սոյուխ) հասանք մոտ մեկ ժամում: 3143մ բարձրության վրա գտնվող գագաթ գնացինք զառիթափ լանջերով ու խիտ անտառներով: Ճանապարհը, հուրախություն, լավ վիճակում էր: Այնտեղից ուղղվեցինք դեպի մեզ հետաքրքրող վայրեր՝ Խաշինք (Խաշլիդաղ, բարձրությունը՝ 2689մ) եւ Խորխատ (բարձրությունը՝ 2392մ) լեռնագագաթներ:

Մեզ ուղեկցող Արմեն Գյուլասարյանը, ով զորամասի հրամանատարի՝ թիկունքի գծով տեղակալն է, պատմեց, որ ճանապարհը կառուցվել է Վազգեն Սարգսյանի օրերում, երբ գնդի հրամանատարը Ղեւոնդ Հովհաննիսյանն էր: Սակայն դրանից հետո էլ, գրեթե ամեն տարի, բարեկարգվել է ճանապարհը՝ հատկապես գարնանային ձնհալից ու հորդառատ անձրեւներից հետո, նաեւ նոր ճանապարհներ են հիմնվել ու հիմնվում:

Լեռնագագաթի մատույցներում էինք, երբ հանդիպեցինք «Մեղրու ՃՇՇՁ» ՍՊ ընկերության (տնօրեն՝ Ազատ Գասպարյան) «Komatsu» հզոր տրակտորին: Մեքենավար Ռազմիկ Գինոսյանը տեղեկացրեց, որ նոր առաջադրանք ունի՝ հենակետերից մեկի ուղղությամբ այլընտրանքային ճանապարհ է կառուցվում:

Ի դեպ, առաջնագծում քանիցս դրվատանքի խոսքեր լսեցինք Ազատ Գասպարյանի մասին:

– Անհրաժեշտության դեպքում Մեղրու ճանշինը, առանց հապաղելու, օգնում է ամբարձիչով, ավտոկռունկով, ինքնաթափ մեքենայով, բուլդոզերով, շինանյութով (խիճ, ավազ, ցեմենտ), իսկ ձմռանը՝ մաքրող տեխնիկայով եւ այլ միջոցներով, – պատմում էին զորամասի պատասխանատուները:

Առաջնագծում կատարվող աշխատանքները, մինչդեռ, չեն սահմանափակվում միայն ճանապարհների պատրաստմամբ ու բարեկարգմամբ: Մի քանի տեղ էլ ինժեներական ուրիշ կառույցներ էին ամրացվում:

Զորամասի հրամանատարի՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալ, մայոր Գոռ Ղարիբյանը, ով նույնպես ուղեկցում էր մեր ստեղծագործական խմբին, ինժեներական կառույցների արդիականացումն իրավիճակով պայմանավորված քայլ չէր համարում:

– Դրանք մշտապես կատարվող, շարունակական գործողություններ են՝ դիրքերն առավել հուսալի եւ ապահով դարձնելու համար, – ասաց Գոռ Ղարիբյանը:

* * *

Արցախյան քառօրյա պատերազմի եւ հաջորդած օրերին յուրահատուկ իրավիճակ էր ստեղծվել նաեւ հայ-ադրբեջանական սահմանագծի նախիջեւանյան հատվածի այդ մասում:

Կար հավանականություն, որ ադրբեջանական կողմը երկրորդ ճակատը կբացի:

Սպասողական վիճակ էր սահմանի ամբողջ երկայնքով:

Բոլոր դեպքերում հայոց զինական ուժը պատրաստ էր արժանապատվորեն «դիմավորելու» հրոսակներին:

Եվ, այդուհանդերձ, երկրորդ ճակատ բացելու ցնորական քայլին Ադրբեջանը չդիմեց, ինչն ավելի շատ, կարծում ենք, բխում էր Նախիջեւանի շահերից:

Մեզ հետ, անտարակույս, համամիտ կլինեն բոլոր նրանք, ովքեր գեթ մեկ անգամ այցելել են Սոյուխ եւ տեսել իշխող բարձունքներում արմատներ ձգած մեր դիրքերը, որոնցից յուրաքանչյուրը, իսկապես, մի-մի ամրոց է հիշեցնում:

Հիացմունք առաջացրեց այդ դիրքերում ծառայություն իրականացնող զինվորի մտածելակերպը:

Ապրիլյան լարված օրերին նրանք կոչ էին անում կամավորականներին՝ չգալ իրենց մոտ, այլ մեկնել ղարաբաղա-ադրբեջանական շփման գիծ, իրենք միայնակ էլ հակահարված կտան հակառակորդին, եթե…

Այսօր էլ դիրքապահ զինվորը նույն կարծիքն ունի, այսօր էլ զինվորը կարեւորում է թիկունքի աշխատանքը:

– Եթե թիկունքում ամեն ոք իր գործը նվիրումով կատարի, ապա դա կլինի ամենամեծ աջակցությունն առաջնագծում կանգնած զինվորին, – բարձրաձայն խորհրդածում էր ժամկետային զինծառայողներից մեկը:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

Վարդան Խդրյան
Կապիտան, վաշտի հրամանատար

Այդ բոլորով հանդերձ՝ քառօրյա պատերազմի եւ հաջորդած օրերին Մեղրի-Նախիջեւան սահմանի դիրքապահները Մեղրու տարածաշրջանի բնակչության չթուլացող ուշադրության կենտրոնում էին: Գոհունակության խոսքեր էինք լսում տարածաշրջանի համայնքային իշխանությունների, հանրության բոլոր խավերի մասին: Նշվում էր Ագարակի քաղաքապետ Մխիթար Զաքարյանի անունը, ով համակարգում էր ցուցաբերվող օգնությունը:

* * *

Կարեւոր մի խնդիր, այնուամենայնիվ, առավել հետաքրքրություն էր ներկայացնում մեր այցելության ընթացքում: Հնարավորինս պետք է պարզեինք՝ որքանո՞վ է հավաստի բնակչության շրջանում տարածված խոսակցությունը, թե մեկ-մեկուկես տարի առաջ Ադրբեջանի զինված ուժերը ճեղքել են պետական սահմանը եւ դիրքավորվել մեր տարածքում՝ Ագարակ քաղաքի ուղղությամբ:

Փոխգնդապետ Արմեն Գյուլասարյանն ու մայոր Գոռ Ղարիբյանը մեզ տարան այնպիսի տեղանք, որտեղից կարելի էր դիտարկել ադրբեջանական այդ հենակետը:

Նոր հենակետը գտնվում է Ծիրանածորից դեպի հյուսիս ձգվող կամ Կալպեկից հարավ ձգվող լեռնաշղթայի արեւմտյան լանջին: Ընդորում՝ հայ-ադրբեջանական սահմանն այդտեղ Գողթանսարից դեպի հարավ ձգվող շղթան է, իսկ մեզ հետաքրքրող վայրը շղթայի հարավարեւմտյան հատվածում է: Ասել է թե՝ ադրբեջանական նոր հենակետն իրենց տարածքում է, եւ սահմանախախտման մասին խոսք լինել չի կարող:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

> *«Թագավոր», «Գեւորգ», «Մխիթար սպարապետ» հենակետերում էլ համոզվեցինք, որ ադրբեջանական նշված դիրքը մեր կողմից գրեթե օղակի մեջ է առնված եւ ռազմավարական տեսակետից զրո նշանակություն ունի: Ավելին՝ ադրբեջանական այդ հենակետին գրեթե դեմ հանդիման մեր «Խաչ», «Հալիձոր», «Դավիթ Բեկ» հենակետերն են:*

* * *

Առաջնագծի հենակետերում մեր ստեղծագործական խմբին ջերմությամբ էին ընդունում: Քանի-քանի անգամ լսեցինք՝ «Բարի գալուստ մեր հենակետ»: Որպեսզի անց էլ Վահրամ Օրբելյանն ու Համլետ Գեւորգյանը «ձուլվում» էին մթնոլորտին՝ կարծես ժամկետային զինծառայողների վաղեմի մարտական ընկերները լինեին:

Զինվորներին հետաքրքրում էր նախեւառաջ ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում տիրող վիճակը: Իսկ «Մխիթար սպարապետ» հենակետում իսկական «քաղպարապմունք» ստացվեց: Մենք հաճույքով պատասխանում էինք զինվորների հարցերին:

«Գեւորգ» հենակետում հնչեցրած մեր հարցին՝ *«Դժվար չէ՞ ձմռանն այս դիրքերում, չէ՞ որ սաստիկ քամիներ են լինում, երբեմն 30-40 աստիճանի ցրտեր», ժամկետային զինվորը պատասխանեց՝ «Եթե ոչ մենք, ապա ուրիշ ո՞վ պետք է դիմանա ու պաշտպանի Հայաստանի սահմանները»:*

Իսկապես, մեր սահմանապահ տղաները սովորական զինվորներ չեն, նրանք մեր երկրի այսօրվա ու վաղվա արժանապատիվ տերերն են:

Առհասարակ հաճելի էր հենակետերի մթնոլորտը: Հենակետ ասվածն էլ, իր մի քանի շուրջօրյա դիտակետով, մի ընտանիք է, մի տնտեսություն, մի բերդ՝ անհրաժեշտ բոլոր ենթակառուցվածքներով՝ դեղի արկղից մինչեւ խոհանոց, ջրի թերմոսներից մինչեւ վառարաններ, հանգստյան սենյակից մինչեւ շարահրապարակ, զինանոցից մինչեւ պաշտպանական գոտի, գիշերային լուսավորության հնարավորությունից մինչեւ զինվորի համար առաջին անհրաժեշտության պարագաներ եւ, իհարկե, կա-

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

19 մայիսի 2016թ., Գողթանսար (Սոյուխ)

19 մայիսի 2016թ., Գողթանսար (Սոյուխ)

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ Հ. ՀԱՄԻՐՅԱՆԻ

պի հուսալի միջոցներ…

Մեր այցելության օրը երեք հենակետում հերթական 14-օրյա հերթապահությունն էր իրականացնում կապիտան Վարդան Խդրյանի վաշտը: Իսկ վաշտի սպաները հենակետերի պատասխանատուներ էին՝ ավագ լեյտենանտ Գուրգեն Կոստանյանը՝ «Մխիթար սպարապետ»-ում, ավագ լեյտենանտ Գրիշա Նիկողոսյանը՝ «Գեւորգ»-ում, ավագ լեյտենանտ Էդուարդ Սահակյանը՝ «Թագավոր»-ում:

Բայց նրանք, որքանով հասկացանք, արժանապատիվ ու քաջ հրամանատարներ չեն սոսկ, այլ՝ զինվորների ծնողներ, ավագ ընկերներ, բարեկամներ… Առաջնագծում այլ վիճակ չէինք էլ պատկերացնում:

* * *

Համոզված ենք՝ յուրաքանչյուր ոք, ով այցելում է «Թագավոր» հենակետ, սքանչանում է եւ հպարտություն ապրում:

Այդտեղ լինելուց հետո ես միայն հասկանում, թե ինչու են հենակետին հենց այդ անունը տվել: Իրոք որ թագավոր… Ե՛վ դիրքով, եւ՝ ամրությամբ ու հուսալիությամբ, եւ՝ հակառակորդին (հարկ եղած դեպքում) հարվածելու բացառիկ հնարավորությամբ:

Զորամասի հրամանատար Կարեն Սեդրակյանի հետ քիչ ենք շփվել, մեր այցելության օրն էլ զորամասում չէր: Բայց միայն «Թագավոր» հենակետի կառուցման համար, որ իրականացվել է մոտ մեկ տարի առաջ, արժանի է բարձր գնահատության:

Շատերի հավաստմամբ՝ զորամասի հրամանատարը՝ առավել, քան նախորդ հրամանատարներից որեւէ մեկը (Ղեւոնդ Հովհաննիսյանից բացի), ամենամեծ ուշադրությունն է դարձրել (եւ դարձնում) առաջնագծի ինժեներական կառույցների արդիականացմանը, հենակետերի ու դիտակետերի հուսալիության ապահովմանը:

Դրանում համոզվեցինք նաեւ «Մխիթար սպարապետ» եւ «Գեւորգ» հենակետերում:

Հենակետերի անուններն էլ հենց այնպես չեն ընտրված: Ամեն մի անուն մի ողջ պատմություն է, ոգեշնչման ակունք, պատասխանատվության հավելյալ ազդակ. Դավիթ Բեկ, Մխիթար սպարապետ, Հալիձոր (նկատի է առնվել 1727թ. մարտին Հալիձորի բերդի հերոսական պաշտպանությունը), Գեւորգ (1992-ին այդ դիրքերում նահատակված մեղրեցի ազատամարտիկ Գեւորգ Խաչատրյանն է), Խաչ, Կաքավաբերդ…

Հենակետերի տպավորիչ ու ոգեւորող վիճակը, անշուշտ, զորամիավորման հրամանատար, գեներալ-մայոր Անդրանիկ Մակարյանի նվիրական աշխատանքի հերթական արտացոլանքն է:

* * *

Երբ ամիսներ առաջ «Սյունյաց երկրին» հարցազրույց տվեց զորամիավորման հրամանատար, գեներալ-մայոր Անդրանիկ Մակարյանը, հասկանալի դարձան շատ-շատ հանգամանքներ՝ կապված նախիջեւանյան սահմանի հետ:

Բայց սույն այցելությունը մեզանում ամրապնդեց համոզվածությունն ու վստահությունը, որ հայ-ադրբեջանական պետական սահմանի այդ հատվածի պահպանությունը, հիրավի, հուսալի ձեռքերում է:

Դժվար, բայց եւ պատվավոր այդ առաքելությունը Մեղրու եւ Կապանի տարածաշրջաններում իրականացնում է Ագարակի փառապանծ զորամասը: Մերձարաքսյան Ծիրանաձորից մինչեւ Կապուտջուղի երկնաքեր բարձունքներ ու Գեղիի ձոր հենց այդ զորամասի հսկողության ներքո է գտնվում մեր պետական սահմանը:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

21 մայիսի 2016թ.

Գողթան փուն. այդքան մոտ ու այդչափ հեռու…

էջ 1

տեղ հաճախ են տեղի ունենում օձերի «ճակատամարտեր», ինչի համար էլ լեռը կոչվել է Օձերի լեռ (Օձալեռ, Օձասար):

Մեր սահմանին ամենամոտ բնակավայրը Քյոթամ (Քյոթան) գյուղն է, որը, ըստ մի շարք հետազոտողների, Գողթն գյուղաքաղաքի տեղում է հետագայում կառուցվել:

Մեր առջեւ բացված ընդարձակ տարածքի կենտրոնում՝ հարավից հյուսիս ձգվող, Օրդուբադն է՝ գավառի գլխավոր բնակավայրերից մեկը: Հին հայկական Որդվատն է, Որդուպատը: Այդտեղից եւ մերձակա գյուղերից հայերը վերջնականապես հեռացան 1988-89թթ.՝ ադրբեջանցի հրոսակների ճնշմամբ: Պարսկական տիրապետության շրջանում՝ 16-րդ դարում, պաշտոնական գործածությունից դուրս մղված Գողթն անվանը (որպես գավառանուն) փոխարինելու եկավ Օրդուբադ անունը:

Արաքս գետի ձախ ափին՝ հարթավայրում, Ջուլֆա քաղաքն է:

Մեր քաջատեղյակ ուղեկցողները ցույց տվեցին Ջուլֆայից մի քանի կմ արեւմուտք՝ Արաքսի ձախափնյա կողին ընկած տարածքը, որտեղ հռչականուն Ջուղայի ավերակներն են՝ առայսօր թուրքի կողմից պղծվող հազարավոր խաչքարերով: Այդ քաղաքը, ըստ Մովսես Խորենացու, հիմնադրել է հայոց թագավոր Տիգրանը՝ Աժդահակին հաղթելուց հետո: Կան ուրիշ ավանդազրույցներ եւս՝ Ջուղայի հետ կապված: Քաղաքը ծխացող ու անբնակ ավերակների կույտի վերածվեց 1603-04 թվականներին՝ Շահ-Աբասի ավերիչ արշավանքների ժամանակ:

Օրդուբադ քաղաքից մի քիչ հյուսիս-արեւմուտք Ագուլիսն է՝ հռչակավոր Սբ Թովմա Առաքյալի վանքով ու տասը թաղով, որն ավերվեց 1918-ին թուրքական զորքերի կողմից:

Օրդուբադ քաղաքից հյուսիս-արեւելք Նյուսնյուս (Նուսնուս) բնակավայրն է՝ պարզորոշ երեւացող: Սա, ըստ Ղեւոնդ Ալիշանի, Գողթն գավառի Նունից գյուղն է:

Հեռվում իշխող մշուշը թույլ չտվեց տեսնել Օրդուբադից հյուսիս-արեւմուտք գտնվող Ցղնա գյուղը, որտեղ ծնվել է «նահիրյան հանճարի հազարամյա տեսիլ», «այր մշտատեւ՝ ձայնապետ-ձայների արքա-ձայնագիր» Կոմիտասի հայրը՝ Գեւորգ Սողոմոնյանը: Ասում են՝ Ցղնայում մինչեւ հիմա էլ կանգուն են Սողոմոնանց ապարանքի ավերակները:

Օրդուբադի մոտակայքում են ծնվել Արամ Խաչատրյանի ծնողները:

Օրդուբադի մերձակայքում գտնվող Ազա գյուղում է ծնվել Չարենցի առաջին կինը՝ Արփենիկ (Աստղիկ) Տեր-Աստվածատրյանը, ում բանաստեղծը նվիրել է իր նշանավոր գործերից մի քանիսը, նաեւ իր «ամենաչքնաղ երկը»՝ «Նավզիկեն»:

Այդ ամենը տեսնելով՝ չէինք կարող չհիշել, որ մեր առջեւում հայոց այն երկրամասն է, որտեղ գործել է Սուրբ Մեսրոպ Մաշտոցը՝ երկու անգամ՝ 390-ական եւ 420-ական թթ. այցելելով գավառ՝ հիմնելով դպրոցներ, պայքարելով հեթանոսների դեմ:

Ի վերջո դա այն երկրամասն է, որտեղ ծնվել են հայ բանահյուսության ամենահին գոհարները՝ Գողթան երգերը: Պատահական չէ, որ Պատմահայր Խորենացին Գողթանը ներկայացրել է որպես շնորհալի երգիչ-երաժիշտների հայրենիք:

Ավելորդ չենք համարում հիշեցնել, որ Գողթն գավառը՝ տարածված Արաքս գետի ձախ ափին, պատմության ընթացքում քանիցս կռվախնձոր է եղել Սյունիքի ու Վասպուրականի հայ նախարարական տների միջեւ: Այնպես որ՝ թեեւ Վասպուրականի գավառներից է (ըստ «Աշխարհացույցի»), բայց ավելի հաճախ Սյունյաց աշխարհի մաս է կազմել: Հարավում սահմանակից էր Արաքս գետին, արեւելքում՝ Արեւիք ու Չորք, հյուսիսում՝ Ծղուկ գավառներին:

…Գողթանսարում եղանք «Թագավոր», «Գեւորգ», «Մխիթար սպարապետ» հենակետերում: Ամենուր ժամկետային զինծառայողներ էին՝ Հայաստանի Հանրապետության գրեթե բոլոր շրջաններից:

Հաճելի էր նկատել, որ զինվորները գիտեն Գողթան աշխարհի, նրա գլխավոր բնակավայրերի, հայոց մեջ Գողթանի խաղացած բացառիկ դերի մասին: Դա էլ բնական ու օրինաչափ է. հնարավոր չէ ամեն օր, անգամ առանց հեռադիտակի, դիտարկել այդ վայրերն ու ճանաչելու ձգտում չունենալ:

Առաջին հայացքից միգուցեեւ այդ ամենն ուղղակի կապ չունի մարտական դիրքերում կանգնած զինվորի հետ, բայց… Զինվորական ծառայությունը, նախեւառաջ, հայրենանվերություն է, հայրենապաշտություն, մեր դեպքում՝ նաեւ հայրենատենչություն: Իսկ դրանք զգացմունքներ են, որոնց օգնությամբ պետական սահմանի ամեն մի հենակետ, ամեն մի քար ու թուփ դառնում են շնչավոր, ոգեղեն…

Առավել հաճելի է, որ տարածքի մանրամասն իմացությամբ աչքի է ընկնում նախեւառաջ սպայական անձնակազմը:

Զորամասի հրամանատարի՝ թիկունքի գծով տեղակալ, փոխգնդապետ Արմեն Գյուլասարյանը ծագումով Կուրիս գյուղից է, դեռեւս մանկության տարիներից քաջածանոթ է հազար ու մի ձորով եւ կեռմանով, դժվարանց ճանապարհներով ու զառիթափ լանջերով պարուրված այդ տարածքին: Պատկերացնել կարելի է, թե տարածքին քաջատեղյակ զինվորն ու հրամանատարն ինչեր կարող են անել մարտական գործողությունների ժամանակ: Մեկ անգամ, ի դեպ, արդեն տեսել ենք. դա 1990-ականների պատերազմի ժամանակ էր, երբ Գողթանսարի լանջերին մարտական գործողություններ էին ընթանում:

…Գողթանսար բարձրացանք Կաքավաբերդով (լեռնագագաթի հարավարեւելյան լանջն է): Կաքավաբերդը վաղուց միայն նույնանուն բերդի անունը չէ, որ հիշատակվում է միջնադարյան աղբյուրներում եւ որը գտնվում էր Կուրիս ու Գուդեմնիս գյուղերի արանքում: 17-18-րդ դարերից երբեմնի բերդի շրջակայքը նույնպես կոչվում է Կաքավաբերդ:

Այդ անունը, շնորհիվ Ակսել Բակունցի, իր հավերժական տեղն է գտել մեր գեղարվեստական գրականության մեջ՝ «Ալպիական մանուշակ» գլուխգործոցում: Գրական այդ երկում տեղ գտած «Կաքավաբերդի գլխին տարին բոլոր ամպ է նստում… » տողը, պարզվում է, ըստ էության, խոր իմաստ եւ մեծ ցավ է պարունակում իր մեջ:

Հավանաբար Բակունցն էլ մի օր այդտեղով բարձրացել է լեռան կատար եւ տեսել հայոց յուրօրինակ ալպիական մանուշակը՝ Գողթանը, տրորված ու գերության մեջ:

Եվ դրանից հետո չէր կարող չծնվել հիշյալ պատմվածքի՝ նաեւ ցավ կրող տողը՝ «Կաքավաբերդի գլխին տարին բոլոր ամպ է նստում… »:

Մայիսի 19-ի արեւոտ ու պարզկա օրն էլ այդ լեռնագագաթին ամպ էր նստած…

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

20 մայիսի 2016թ.

ԳՈՌ ՂԱՐԻԲՅԱՆ.
«Մեր զինվորները պատրաստ են եղել իրադարձությունների հետագա զարգացմանը»

Մայոր Գոռ Ղարիբյանը 1994-1998 թվականներին սովորել եւ ավարտել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը, որից հետո մինչեւ հիմա ծառայում է հանրապետության զինված ուժերում: Այժմ Ագարակի զորամասի հրամանատարի՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալի ժամանակավոր պաշտոնակատարն է: Մարտական հենակետերից մեկում նա սիրով պատասխանեց «Այսօրվա երկրի» հարցերին:

– Պարոն մայոր, եղանք մարտական հենակետերում, որոշակի պատկերացում կազմեցինք դիրքապահների ծառայության մասին, այնուամենայնիվ, ձեր միջոցով ուզում ենք մեր տպավորություններն ամբողջացնել, ինչպե՞ս եք գնահատում օպերատիվ իրավիճակը հայ-ադրբեջանական սահմանի՝ Նախիջեւան-Սյունիք հատվածում:

– Կարող եմ ասել, որ իրավիճակը վստահորեն վերահսկվում է մեր զինվորների կողմից, լուրջ միջադեպեր չկան:

– Ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում ապրիլի 2-5-ը տեղի ունեցած ռազմական գործողությունների արձագանքները հասան այստեղ, մանավանդ խոսակցություններ եղան, որ ադրբեջանական կողմում կուտակումներ կային այդ օրերին:

– Սահմանի մեր հատվածում իրավիճակի լարվածություն չի եղել, բայց հաշվի առնելով, թե ով է մեր հակառակորդը, իմանալով նրա նենգ ու դարանակալ էությունը, պատրաստ ենք եղել իրադարձությունների հետագա զարգացմանը: Բարձրացրել ենք դիրքապահ զինվորների մարտական պատրաստականությունը, զգոնությունը:

– Ապրիլյան օրերին տեղաշարժ նկատվո՞ւմ էր հակառակորդի հենակետերի շրջանում:

– Նման բան չի նկատվել:

– Ընդհանրապես ինչպե՞ս է զինվորների տրամադրությունը, մարտական ոգին:

– Բարձր, միշտ պատրաստ են դիմակայել հակառակորդի ոտնձգություններին եւ անհրաժեշտության դեպքում հակահարված տալ:

– Երբ բարձրանում էինք մարտական հենակետեր, մտովի պատկերացնում էինք, թե ձմռանն այս կողմերում ինչ վիճակ է լինում. նկատի ունենք եղանակային պայմանները:

– Ինչ խոսք, որ դիրքապահների ծառայությունն անցնում է լեռնային բարդ ռելիեֆի պայմաններում: Բայց պիտի ասեմ, որ ամառ թե ձմեռ հենակետեր տանող ճանապարհը բաց է, դրանում մեզ օգնում են Մեղրու ճանապարհաշինարարները, ինչը թույլ է տալիս անհրաժեշտ ամեն ինչը ժամանակին մատակարարել զինվորներին:

– Այնուամենայնիվ, ի՞նչն է այսօր պակասում զինվորին:

– Զինվորն ընդհանրապես ուշադրության, վերաբերմունքի է արժանի: Բայց այս վերջին շրջանում դրանց պակասը չունի: Այդ ուշադրությունից եւ վերաբերմունքից նրանք ավելի են ոգեւորվում, ավելի լավ են ծառայում: Ագարակի քաղաքապետ Մխիթար Զաքարյանը (եւ ոչ միայն ինքը) պարբերաբար լինում է դիրքերում, 100-ից ավելի կամավորներ են եկել, օգնել, ինժեներական աշխատանքներ կատարել: Հիմա էլ պատրաստակամություն են հայտնում օգնել ոչ միայն աշխատուժով, այլեւ շինանյութով:

– Լսել էինք, որ Կալպեկի ուղղությամբ երկու տարի առաջ հակառակորդը նոր դիրք է վերցրել, բայց դուք միանգամայն այլ մեկնաբանություն տվեցիք:

– Ոչ թե հենակետ են վերցրել, այլ նոր հենակետ են կառուցել: Եվ դա՝ իրենց տարածքում: Դա սահմանի խախտում չէ, իրենց տարածքում է եղել դիրքի փոփոխությունը, որ չի սպառնում մեր հենակետերի անվտանգությանը: Մեր դիրքերը, ինչպես դուք տեսաք, տվյալ դիրքերի համեմատ ավելի գերիշխող են:

– Վերջերս շատ է խոսվում զինվորի կենցաղի մասին: Ղարաբաղա-ադրբեջանական շփման գծի մարտական գործողություններից հետո մեր բանակի որոշ թերություններ ջրի երես դուրս եկան: Եթե, օրինակ, ասենք հենակետում առաջին բուժօգնության անհրաժեշտություն կա, խնդիրն ինչպե՞ս է լուծվում:

– Հենակետերում կան դեղորայքի արկղեր, որոնք ապահովված են առաջին բուժօգնության դեղորայքով: Բացի այդ ժամանակ առ ժամանակ բուժծառայության բժիշկները լինում են հենակետերում, հետաքրքրվում զինվորների առողջությամբ, ստուգում հենակետի սանիտարահիգիենիկ վիճակը:

– Իսկ որ նոր դիրքեր եք ավելացնում, ինժեներական կառույցներն եք ամրապնդում, դա ներկա ռազմաքաղաքական իրավիճակո՞վ է պայմանավորված, թե՞ պարզապես հայկական դիրքերն ավելի հաստատուն դարձնելու նպատակ ունի:

– Ավելի հաստատուն դարձնելու, ավելի ամուր պահելու համար: Ապրիլի սկզբի ռազմաքաղաքական իրադարձությունների հետ դա կապ չունի: Դիրքերի ինժեներաշինարարական աշխատանքները սկսվել են 2015 թվականին, ներկա պահին էլ շարունակվում են, եւ մեծ ծավալի աշխատանքներ կան իրականացնելու:

– Հիմա անասունների ամառային պահվածքի ժամանակ է, նախիրը սար է բարձրանում, հիշում եմ՝ մի քանի տարի առաջ Վահրավարի գյուղապետն ասաց, որ անասնագողության դեպք է եղել ադրբեջանցիների կողմից, մարդիկ ակամա խախտում են սահմանը, նման դեպքերի դուք պատրա՞ստ եք, լինո՞ւմ են նման միջադեպեր:

– Նման դեպք չի եղել, քանի որ այս հատվածում հենակետերը մոտակա ադրբեջանական բնակավայրից 20-25 կմ հեռու են: Դժվար թե մոլորված մարդը հասնի այստեղ: Մեր հենակետերի դեպքում նման բան հնարավոր չէ:

– Կուզեինք իմանալ, որպես անձնակազմի հետ տարվող աշխատանքների պատասխանատու, թե զինակոչիկները կրթական ու ֆիզիկական ի՞նչ պատրաստվածությամբ են ներկայանում զինծառայության:

– Հիմա ավելի բանիմաց ու կրթված սերունդ է գալիս զինծառայության, ուզում եմ նշել, որ ռազմագիտություն առարկայի դասավանդման որակն է բարձրացել, ճիշտ է, դեռ տեղ կա բարձրացնելու, բայց նախկինի համեմատ առաջընթացը նկատելի է:

– Իսկ այստեղ, եթե գաղտնիք չէ, տակտիկական ինչ պարապմունքներ են անցկացվում: Ապրիլյան դեպքերը ցույց տվեցին, թե ինչպես են ժամկետային զինվորները հետ շպրտում հակառակորդին, նաեւ տանկ ու զրահամեքենա խոցում, իսկ առանց տակտիկական հմտությունների եւ գիտելիքների՝ նման նպատակի չես հասնի:

– Մարտավարական պարապմունքներն անցկացվում են ըստ նախատեսված պլանի, զորավարժությունները, կրակային պատրաստությունները անցկացվում են ելնելով ռելիեֆից, որ դիրքապահներն ավելի պատրաստված լինեն հնարավոր իրադարձություններին:

– Ձեզ՝ բարի ծառայություն:

Զրույցը՝ ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ

«Թագավորի» դիմաց ադրբեջանական այս դիրքն է՝ Ագարակ քաղաքից՝ արեւմուտք

Թեպետ խաղաղ են բացվում առավոտները

Երկու տարի է, ինչ Ագարակի գնդում է ծառայում ավագ լեյտենանտ Էդվարդ Սահակյանը: Բարձրագույն ռազմական կրթություն է ստացել Հունաստանի Հանրապետության ցամաքային զորքերի ռազմական ակադեմիայում, այնուհետեւ մեկ տարի սովորել է հետեւակի դպրոցում՝ ստանալով զինվորական նեղ մասնագիտություն եւ լեյտենանտի կոչում: Ընդհանուր առմամբ նրա զինվորական ուսուցումը վեց տարի է տեւել: *«Դպրոցն ավարտելուց հետո այնպես ստացվեց, որ Հունաստանում էի ապրում, բայց չցանկանալով հաստատվել արտերկրում, ընտրեցի զինվորական մասնագիտությունը: Վերադառնալով Հայաստան՝ դիմում ներկայացրի, քննություններ հանձնեցի՝ իրավունք նվաճելով ուսանելու Հունաստանի ռազմական ակադեմիայում»,* – պատմում է հենակետի ավագը: Վիճակահանությամբ է նրան բաժին ընկել պաշտպանելու հանրապետության հարավային սահմանները:

«Թագավոր» հենակետի ավագն ասում է, որ թեպետ խաղաղ են բացվում առավոտները, բայց թուրքին չի կարելի վստահել: *««Թագավորը» իր դիրքով էլ է թագավոր, գերիշխող դիրք ունի հակառակորդի մյուս հենակետերի համեմատ, բայց երբեք չպիտի կորցնել զգոնությունը, մեր՝ 4-րդ բանակային կորպուսում, մահվան ելքով մի դեպք վերջերս է գրանցվել, բայց, փառք Աստծո, մեր ուղղությամբ առայժմ ամեն ինչ հանգիստ է, սակայն աչալրջությունը երբեք կորցնել չի կարելի»,* – իրավիճակն է ներկայացնում ավագ լեյտենանտը: Ընտանիքն էջմիածնում է բնակվում, ունի կրտսեր եղբայր:

«Ամեն ինչ լավ է, թող չանհանգստանան», – զինվորականի հակիրճությամբ պատասխանում է հարցին, թե ի՞նչ կփոխանցեր իր ծնողներին եւ մտերիմներին:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Այունյաց երկիր ®

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղ

ՀԻՆԳՇԱԲԹԻ | 26 ՄԱՅԻՍԻ 2016Թ. | № 17 (393)

www.syuniacyerkir.am

ICo-op TEMPUS ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

ICo-op նախագծի շրջանակներում ՀԱՊՀ-ի Կապանի մասնաճյուղը համագործակցել է ստորեւ նշված բուհերի եւ ընկերությունների հետ:

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան

www.polytech.am

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը (ՀԱՊՀ) 1933թ. Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի (ԵրՊԻ) իրավաժառանգորդն է, որը հիմնադրվել է Երեւանի պետական համալսարանի ճարտարապետաշինարարական եւ քիմիատեխնոլոգիական ֆակուլտետների հիման վրա՝ ունենալով ընդամենը 107 ուսանող: 1980-1985թթ. ԵրՊԻ-ն արդեն Հայաստանի խոշորագույն բարձրագույն ուսումնական հաստատությունն էր՝ 66 մասնագիտությամբ սովորող շուրջ 25000 ուսանողով: 1991թ. ԵրՊԻ-ն վերակազմակերպվեց «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի, իսկ 2014թ.՝ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» («ՀԱՊՀ») հիմնադրամի: Համալսարանը հիմնադրման օրվանից մինչ այժմ տվել է շուրջ 100000 շրջանավարտ: Ներկայումս ՀԱՊՀ-ի 11 ֆակուլտետում (քոմփյութերային համակարգերի եւ ինֆորմատիկայի, կիբեռնետիկայի, էներգետիկայի, էլեկտրատեխնիկայի, մեքենաշինական, մեխանիկայի եւ մեքենագիտության, ռադիոտեխնիկայի եւ կապի համակարգերի, քիմիական տեխնոլոգիաների եւ բնապահպանական ճարտարագիտության, ընդերքաբանության եւ մետալուրգիայի, տրանսպորտային համակարգերի, մաթեմատիկայի) 44 բակալավրական եւ 40 մագիստրոսական կրթական ծրագրերով սովորում է շուրջ 9000 ուսանող: Նրանց դասավանդում է 900 դասախոս, որոնց մեծ մասն ունի գիտական աստիճան եւ կոչում: Համալսարանն ունի շարունակական կրթության համակարգ, որի շրջանակներում գործում են որակավորման բարձրացման եւ վերապատրաստման մի շարք դասընթացներ:

ՀԱՊՀ-ն ունի մասնաճյուղեր Գյումրի, Վանաձոր եւ Կապան քաղաքներում:

Վերջին երկու տասնամյակի ընթացքում համալսարանը զարգացրել եւ ընդլայնել է միջազգային համագործակցությունն աշխարհի առաջատար համալսարանների եւ հետազոտական կենտրոնների հետ: ՀԱՊՀ-ը, լինելով Եվրոպական համալսարանների ասոցիացիայի, Միջերկրական, Սեւծովյան ու ԱՊՀ-ի համալսարանների ցանցերի անդամ, ներգրավված է եվրոպական եւ այլ արտասահմանյան ուսումնական ու հետազոտական կենտրոնների ծրագրերում: «Արդյունաբերական համագործակցություն եւ ստեղծագործ ճարտարագիտական կրթություն՝ հիմնված հեռավար ու վիրտուալ գործիքակազմի վրա» նախագծի շրջանակներում համալսարանի Երեւանյան կրթահամալիրը եւ Կապանի մասնաճյուղը համագործակցում են մի շարք եվրոպական առաջատար համալսարանների եւ ընկերությունների հետ:

էջ 6

ÜÛáõÃ»ñÁ å³ïñ³ëï»É ¿ ï»ËÝÇÏ³Ï³Ý ·ÇïáõÃÛáõÝÝ»ñÇ ¹áÏïáñ ê»Ûñ³Ý´³É³ë³ÝÛ³ÝÁ

ICo-op TEMPUS նախագծի մասնակիցներն Իլմենաուի տեխնոլոգիական համալսարանում

ՀԱՊՀ-Ի ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ TEMPUS ՆԱԽԱԳԾԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Կարեւորելով բուհի զարգացման եւ արդիականացման գործընթացում միջազգային համագործակցության դերակատարությունը՝ ՀԱՊՀ-ի Կապանի մասնաճյուղը 1999-2009թթ. գործուն մասնակցություն է ունեցել ՀՊՃՀ-ի կողմից իրականացվող Tempus-Tacis միջազգային ծրագրերին, որոնք նվիրված են եղել համալսարան-արդյունաբերություն համագործակցության զարգացմանը, ՀՊՃՀ-ի ստրատեգիական պլանի մշակմանը, կրեդիտային համակարգի ներդրմանը:

2012 թվականից մասնաճյուղն առաջին անգամ, որպես ինքնուրույն կատարող, մասնակցել է «Արդյունաբերական համագործակցություն եւ ստեղծագործ ճարտարագիտական կրթություն՝ հիմնված հեռավար ու վիրտուալ գործիքակազմի վրա» (530278-TEMPUS-1-2012-1-DE-TEMPUS-JPHES, կրճատ՝ ICo-op TEMPUS) նախագծին եւ իր փոքրաթիվ թիմով հաջողությամբ իրականացրել այն:

ICo-op նախագծի նպատակն է Հայաստանում, Վրաստանում եւ Ուկրաինայում բուհ-արդյունաբերություն համագործակցության հնարավորությունների զարգացումը հեռավար ու վիրտուալ գործիքակազմի հիմքով ճարտարագիտական կրթության արդիականացման միջոցով՝ ընդլայնված համալսարանական միջառարկայական գիտելիքներով եւ կոմպետենցիաներով, ինչպես նաեւ մասնագիտական կրթության եւ վերապատրաստման արդիական ծրագրերի ու միջոցների առաջարկումն արտադրության մասնագետներին:

Նախագիծը հիմնվում է Եվրոմիության առաջավոր բուհերի փորձի, արդյունաբերության գործընկերների փորձառության եւ թիրախային երկրների բիզնես-պահանջմունքների վրա:

ICo-op նախագծի խնդիրներն են.

1. արդյունաբերության ոլորտում գիտելիքների եւ հմտությունների պահանջարկի բացահայտման ու մոնիթորինգի մեթոդաբանության մշակում եւ ներդրում,
2. միջառարկայական կոմպետենցիաներ եւ գիտելիքներ ներառող ուսումնական ծրագրերի մատուցում՝ օգտագործելով հեռավար լաբորատորիաներ կամ վիրտուալ գործիքամիջոցներ,
3. ուսումնական հաստատությունների եւ արդյունաբերական ձեռնարկությունների միջեւ փոխշահավետ ու կայուն գործընկերային հարաբերությունների հաստատում՝ առաջարկելով արտադրության մասնագետների ստաժավորման եւ վերապատրաստման արդիական ծրագրեր:

ICo-op նախագծի ՀԱՊՀ-ի Կապանի մասնաճյուղի կատարող թիմի անդամներն են.

Սեյրան Բալասանյան՝ նախագծի տեղային համակարգող, մասնաճյուղի փոխտնօրեն գիտական աշխատանքների գծով, տեխնիկական գիտությունների դոկտոր,

Հերմինե Գեւորգյան՝ մասնաճյուղի տեղեկատվական տեխնոլոգիաների, ինֆորմատիկայի եւ ավտոմատացված համակարգերի (ՏՏԻ եւ ԱՀ) ամբիոնի դասախոս,

Մանե Աղագուլյան՝ մասնաճյուղի ՏՏԻ եւ ԱՀ ամբիոնի դասախոս,

Աշոտ Ավետիսյան՝ մասնաճյուղի ինֆորմացիոն ցանցի ադմինիստրատոր:

Նախագծի սկզբնական փուլի աշխատանքների կատարմանը մասնակցել են նաեւ մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար պրոֆ. Լեռնիկ Պետրոսյանը եւ ուսումնամեթոդական աշխատանքների գծով փոխտնօրեն Արթուր Սարգսյանը: ■

®

ICo-op TEMPUS ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

էջ 5

Հայաստանի ամերիկյան համալսարան

cse.aua.am

Հայաստանի ամերիկյան համալսարանը մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություն է: Այն հիմնադրվել է 1991թ. եւ հավատարմագրված է ԱՄՆ-ում որպես Կալիֆորնիայի համալսարանի մասնաճյուղ: Համալսարանն իր 230 դասախոսով (60-ը՝ հրավիրված) իրականացնում է ԱՄՆ-ի բարձրագույն կրթության չափորոշիչներին համապատասխան բարձրորակ կրթություն մագիստրոսական 8 եւ բակալավրական 3 մասնագիտությունով՝ տալով շուրջ 1200 ուսանողին մասնագիտական գործունեության ու հետագա ուսումնառության համար անհրաժեշտ գիտելիքներ ու կարողություններ: Համալսարանը խրախուսում է ուսանողների քաղաքացիական ակտիվությունը եւ նպաստում ժողովրդավարական արժեքների արմատավորմանը: Համալսարանի ճարտարագիտական հետազոտական կենտրոնի հիմնական ուղղություններն են այլընտրանքային էներգիայի աղբյուրները, արդյունաբերական համակարգերը, տեղեկատվական անվտանգությունը, ավտոմատացված նախագծման համակարգերը եւ սեյսմակայուն շինարարությունը:

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղ

www.haphkapan.am

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղը հիմնադրվել է 1997 թվականին՝ 1984թ. ստեղծված ԵրՊԻ-ի ուսումնախորհրդատվական կետի հիմքի վրա: Մասնաճյուղում 6 բակալավրական կրթական ծրագրով (տեղեկատվական տեխնոլոգիաներ, ճյուղային տնտեսագիտություն եւ կառավարում, օգտակար հանածոների հետախուզում եւ մշակում, մետալուրգիա, շինարարություն, շինարարական իրերի եւ կառուցվածքների արտադրություն, ինֆորմատիկա եւ կիրառական մաթեմատիկա) սովորում է շուրջ 450 ուսանող (276-ը՝ հեռակա): Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմը ներառում է 34 հիմնական եւ 10 հրավիրված դասախոս, որոնց զգալի մասն ունի գիտական աստիճան եւ կոչում: Մասնաճյուղը սերտորեն համագործակցում է տարածաշրջանի լեռնահանքային ձեռնարկությունների հետ ուսանողների պրակտիկաների կազմակերպման եւ գիտահետազոտական աշխատանքների բնագավառում: Մասնաճյուղը գործուն մասնակցություն է ունեցել ՀԱՊՀ-ի կողմից իրականացվող Tempus-Tacis միջազգային ծրագրերին: 2012 թվականից մասնաճյուղն առաջին անգամ ինքնուրույնաբար մասնակցել է «Արդյունաբերական համագործակցություն եւ ստեղծագործ ճարտարագիտական կրթություն՝ հիմնված հեռավար ու վիրտուալ գործիքակազմի վրա» Tempus նախագծին եւ փոքրաթիվ թիմով հաջողությամբ իրականացրել է այն:

Իլմենաուի տեխնոլոգիական համալսարան (Գերմանիա)

www.tu-ilmenau.de

Իլմենաուի տեխնոլոգիական համալսարանը Գերմանիայի Դաշնության պետական բարձրագույն ուսումնահետազոտական հաստատություն է, որը հիմնադրվել է 1894թ. Թուրինգիայի երկրամասում գտնվող Իլմենաու քաղաքում: Համալսարանը բակալավրի 18 եւ մագիստրոսի 25 կրթական ծրագրով իրականացնում է շուրջ 7200, այդ թվում՝ 1700-ը արտերկրից, ուսանողների ուսումնառությունը տեղեկատվական տեխնոլոգիաների եւ հեռահաղորդակցության, ինֆորմատիկայի, տեխնիկական կիբեռնետիկայի եւ համակարգերի տեսության, օպտրոնիկայի, մեխատրոնիկայի, փոխադրամիջոցների, էլեկտրական, մեխանիկական, արդյունաբերական, կենսաբժշկական, այլ բնագավառների ճարտարագիտության, միկրո եւ նանոտեխնոլոգիայի, այլընտրանքային էներգետիկայի եւ այլ մասնագիտությունների գծով: Համալսարանի գիտակրթական ծրագրերն ունեն տնտեսագիտական եւ բնագիտական բնագավառների հետ սերտորեն կապված հստակ ճարտարագիտական ուղղվածություն:

Համալսարանը գործուն մասնակցություն ունի Իլմի տարածաշրջանի տնտեսական զարգացման ծրագրերին եւ գիտակրթական ոլորտում միջազգային ճանաչում ստանալով՝ դարձել է տարածքային ինովացիոն կենտրոն: Համալսարանի շահեկան առանձնահատկությունների շարքում հարկ է նշել պրոֆեսորադասախոսական կազմի ընդգծված հոգատարությունն ուսանողների նկատմամբ, միմյանց մոտ տեղադրված ժամանակակից դիզայնով մասնաշենքերը, տարաբնույթ հասարակական գործունեությունը եւ սոցիալական աջակցությունը, բազմաթիվ ուսանողական միությունների, մշակութային ու սպորտային միջոցառումների առկայությունը:

Բրասովի ՏՐԱՆՍԻԼՎԱՆԻԱ համալսարան (Ռումինիա)

www.unitbv.ro

Բրասովի համալսարանը հիմնադրվել 1948թ.: Այն պետական բարձրագույն հաստատություն է, որը տեխնիկական եւ հումանիտար մասնագիտության գծով բակալավրական 100, մագիստրոսական 66 ու հետազոտողի 17 գիտական ուղղությունների ծրագրերով իրականացնում է շուրջ 22000 ուսանողի ուսումնառություն, այդ թվում նաեւ հեռավար ուսուցմամբ: Ուսանողների թվով եւ գիտակրթական ծրագրերով համալսարանը դասվում է Ռումինիայի լավագույն բուհերի շարքը:

Համալսարանի 18 ֆակուլտետում, որտեղ դասավանդում է 800 դասախոս, ստեղծված են քոմփյութերային նորագույն տեխնիկայով հագեցած ժամանակակից լաբորատորիաներ, որոնք սպասարկում են բոլոր մասնագիտությունները: Ուսումնական գործընթացում լայնորեն կիրառվում են հեռավար ու վիրտուալ գործիքամիջոցները, որոնք շարունակաբար կատարելագործվում են: Պատշաճ մակարդակով է իրականացվում տեղեկատվական տեխնոլոգիաների գծով մասնագետների պատրաստումը: Համալսարանում գործում է ազգային CISCO ակադեմիան, որը տվել է շուրջ 500 շրջանավարտ, նախադրյալներ են ստեղծվել Microsoft ակադեմիայի ստեղծման համար: Համալսարանում 2008 թվականից ներդրված է ժամանակակից էլեկտրոնային ուսուցման գործիքամիջոցների վրա հիմնված ուսումնառության համակարգ: Համալսարանն արտադրում է հեռավար լաբորատոր սարքավորումներ:

Դեուստոյի համալսարան (Իսպանիա)

www.deusto.es

130-ամյա Դեուստոյի համալսարանը գտնվում է Բասկերի երկրի Բիլբաո քաղաքում եւ ունի մասնաճյուղ Սան Սեբաստիան քաղաքում: Բակալավրի, մագիստրոսի եւ հետազոտողի ծրագրերով համալսարանում սովորում են ավելի քան 10 հազար ուսանող բիզնեսի, տնտեսագիտության, իրավագիտության, ճարտարագիտության, սոցիոլոգիայի, մանկավարժության եւ հասարակագիտության մասնագիտություններով: Համալսարանը սերտ միջազգային համագործակցություն է հաստատել ավելի քան 200 համալսարանի հետ եւ գործուն մասնակցություն է ունենում

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղ

Հայաստանի ամերիկյան համալսարան

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղ

Իլմենաուի տեխնոլոգիական համալսարան (Գերմանիա)

Բրասովի ՏՐԱՆՍԻԼՎԱՆԻԱ համալսարան (Ռումինիա)

Դեուստոյի համալսարան (Իսպանիա)

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղ

®

Քերնթենի կիրառական գիտությունների համալսարան (Ավստրիա)

«Խարկովի պոլիտեխնիկական ինստիտուտ» / Ազգային տեխնիկական համալսարան (Ուկրաինա)

Իվանո-Ֆրանկովսկի նավթի եւ գազի տեխնիկական համալսարան (Ուկրաինա)

Զապորոժիեի ազգային տեխնիկական համալսարան (Ուկրաինա)

«Իլյա Ճավճավաձե» պետական համալսարան (Վրաստան)

«Շոթա Ռուսթավելի» պետական համալսարան (Վրաստան)

էլեկտրոնային ուսուցման գծով ազգային եւ միջազգային ծրագրերին: Շուրջ 1300 ուսանող եւ 50 դասախոս ներգրավված են ակադեմիական շարժունության ծրագրերում: Համալսարանում գործող WebLab-Deusto (www.weblab.deusto.es) հեռավար լաբորատորիան ինտեգրված է ուսումնական եւ վերապատրաստման գործընթացներում: Համալսարանում կազմակերպվել է հեռավար գիտափորձերի համար անհրաժեշտ մասնագիտական սարքավորման արտադրություն:

Քերնթենի կիրառական գիտությունների համալսարան (Ավստրիա)

www.fh-kaernten.at

Քերնթենի կիրառական գիտությունների համալսարանը հիմնադրվել է 1995թ. լեռնային գեղատեսիլ արեւելյան Ալպերում գտնվող Քերնթեն քաղաքում: Համալսարանն իրականացնում է շուրջ 2000 առկա եւ հեռակա ուսուցմամբ ուսանողների ուսումնառություն 30 բակալավրական եւ մագիստրոսական կրթական ծրագրերով՝ ճարտարագիտության, բիզնեսի, առողջապահության եւ սոցիալական ոլորտի մասնագիտություններով: Հիմնական պրոֆեսորադասախոսական կազմն արտադրությունից եւ բիզնեսի ոլորտից հրավիրված բազմափորձ մասնագետների հետ համատեղ ապահովում է միջազգային մակարդակի ուսուցում՝ կիրառելով դասավանդման եւ հեռավար ուսուցման նորագույն, առաջավոր մեթոդներ: Համալսարանն իրականացնում է դասախոսների եւ ուսանողների փոխանակման ծրագրեր՝ համագործակցելով արտերկրի 160 համալսարանների հետ: Համալսարանն ընդգրկված է էլեկտրոնային ուսուցման ուղղվածության ազգային եւ միջազգային նախագծերում, որոնց իրագործմանը մեծապես նպաստում է «Էլեկտրոնային ուսուցում եւ հեռավար լաբորատորիաներ» կոմպետենցիաների կենտրոնը:

«Խարկովի պոլիտեխնիկական ինստիտուտ» ազգային տեխնիկական համալսարան (Ուկրաինա)

www.kpi.kharkov.ua

«Խարկովի պոլիտեխնիկական ինստիտուտ» ազգային տեխնիկական համալսարանը Ուկրաինայի բարձրագույն կրթության հնագույն առաջատարներից է: Այն հիմնադրվել է 1885թ. եւ իր գոյության ընթացքում տալով շուրջ 150000 շրջանավարտ՝ կարեւոր դերակատարություն է ունեցել տեխնոլոգիական Խարկովի ձեւավորման գործում: Համալսարանում 96 մասնագիտությունով սովորում է շուրջ 26 հազար ուսանող, այդ թվում 430 ասպիրանտ: Պրոֆեսորադասախոսական կազմը ներառում է 1700 դասախոս, որոնցից 190-ը դոկտոր-պրոֆեսորներ են, իսկ 800-ը՝ թեկնածու-դոցենտներ: Համալսարանն ունի լայն միջազգային կապեր ու սերտորեն համագործակցում է Ուկրաինայի գիտությունների ազգային ակադեմիայի եւ արդյունաբերական ձեռնարկությունների հետ: Համալսարանում ներդրված է բիզնես միջավայրի հետ սերտորեն համագործակցող արդիական կոմպետենցակողմնորոշված ուսուցման մոդել, ինչը հնարավորություն է տալիս հարմարեցնել կրթական ծառայություններն անցման տնտեսության պայմաններում անընդհատորեն փոփոխվող աշխատաշուկայի պահանջմունքներին:

Իվանո-Ֆրանկովսկի նավթի եւ գազի տեխնիկական համալսարան (Ուկրաինա)

www.nung.edu.ua

Համալսարանը հիմնադրվել է 1967թ. եւ իր գործունեության ընթացքում պատրաստել է նավթի, գազի եւ էներգետիկայի ոլորտի մոտ 28 հազար մասնագետ: Համալսարանի 15 ֆակուլտետում եւ 54 ամբիոնում բակալավրի 28, մագիստրոսի 23 եւ հետազոտողի 30 կրթական ծրագրերով սովորում է 11000 ուսանող Ուկրաինայից եւ 37 այլ երկրից: Համալսարանում դասավանդող 685 դասախոսից 56-ը գիտության դոկտոր է, իսկ 239-ը՝ թեկնածու: Բացի այդ, բարձր որակավորում ունեցող եւս 600 գիտաշխատող ներգրավված է համալսարանի հետազոտական եւ զարգացման ծրագրերում: Համալսարանը մասնակցում է տարբեր միջազգային ծրագրերի:

Զապորոժիեի ազգային տեխնիկական համալսարան (Ուկրաինա)

www.zntu.edu.ua

Զապորոժիեի ազգային տեխնիկական համալսարանը (ԶԱՏՀ) հիմնադրվել է 1900թ. մեխանիկական քոլեջի հիմքի վրա: Ազգային բուհի կարգավիճակ է ստացել 2001թ.: Ներկայումս ԶԱՏՀ-ը ներառում է 6 ինստիտուտ (մեքենաշինության, ֆիզիկայի եւ ճարտարագիտության, ինֆորմատիկայի եւ ռադիոէլեկտրոնիկայի, տնտեսագիտության եւ հումանիտար գիտությունների, կառավարման եւ իրավագիտության), 12 ֆակուլտետ եւ 60 ամբիոն: Բակալավրի, մասնագետի եւ մագիստրոսի 48 կրթական ծրագրերով սովորում է մոտ 13 հազար ուսանող, այդ թվում՝ 5 հազարը՝ հեռակա ուսուցմամբ: Պրոֆեսորադասախոսական կազմը ներառում է 830 դասախոս, որից 600-ն ունի գիտական աստիճան եւ կոչում: Համալսարանը տեղակայված է նորագույն սարքավորումներով հագեցած ուսումնական եւ լաբորատոր 9 մասնաշենքում:

«Իլյա Ճավճավաձե» պետական համալսարան (Վրաստան)

www.iliauni.edu.ge

«Իլյա Ճավճավաձե» պետական համալսարանը հիմնադրվել է 2006թ. Թբիլիսիում՝ ինստիտուցիոնալ տարբեր ուղղվածությամբ վեց տարբեր կրթական հաստատությունների միավորման արդյունքում: Համալսարանի կազմում գործում են բակալավրական կրթական ծրագրերով ուսումնառություն ապահովող 5 քոլեջ՝ արվեստի եւ գիտության, ճարտարագիտության, բիզնեսի, իրավագիտության եւ սպորտի, որտեղ դասավանդում է շուրջ 800 դասախոս: Ուսումնական 6 դեպարտամենտում տարբեր կրթական ծրագրերով եւ մասնագիտություններով սովորում է ավելի քան 13 հազար ուսանող: Համալսարանը միավորում է Վրաստանի տարբեր շրջաններում տեղաբաշխված 25 գիտահետազոտական ինստիտուտ, կենտրոն եւ լաբորատորիա: «Իլյա Ճավճավաձե» համալսարանը ձգտում է հասնել կատարելության գիտակրթական գործունեության բոլոր բնագավառներում:

«Շոթա Ռուսթավելի» պետական համալսարան (Վրաստան)

www.bsu.edu.ge

«Շոթա Ռուսթավելի» պետական համալսարանը հիմնադրվել է 1923թ. Աջարիայի մայրաքաղաք Բաթումում: Այն Վրաստանի ուսումնագիտական եւ մշակութային կարեւոր կենտրոններից է, որի ութ ֆակուլտետում իրականացվում է շուրջ 5000 ուսանողի ուսուցում՝ 43 բակալավրական, 23 մագիստրոսական եւ 8 հետազոտողի ծրագրերով՝ հետեւյալ մասնագիտությունների գծով՝ բնական գիտություններ, ճարտարագիտություն եւ շինարարություն, հումանիտար գիտություններ, իրավագիտություն, հասարակագիտություն եւ այլն: Ուսումնական գործընթացներում ընդգրկված են 244 դասախոս, 55 գիտաշխատող եւ 387 հրավիրված պրոֆեսոր: Համալսարանի գիտական ներուժը զգալիորեն աճեց, երբ 2006թ. մի քանի գիտահետազոտական ինստիտուտներ միավորվեցին համալսարանի հետ: Համալսարանը ներգրավված է մի շարք միջազգային ծրագրերում (Տեմպուս, Էրազմուս, Մունդուս եւ այլն), որոնք ուղղված են կրթական չափորոշիչների, որակի, ինչպես նաեւ ուսանողների եւ դասախոսների շարժունության բարձրացմանը:

■

Հայաստանի ազգային տեխնիկական համալսարանի Կառքի մասնաճյուղ

®

ICO-OP նախագծի շրջանակներում փորձնական վարժանքների կազմակերպում

ԼԵՌՆԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար

Ծնվել է 1959 թվականին՝ Սյունիքի մարզի Վերին Խոտանան գյուղում՝ մանկավարժների ընտանիքում: 1976թ. ավարտել է Կապանի թիվ 7 միջն. դպրոցը եւ ընդունվել Երեւանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը: 1981թ. գերազանց առաջադիմությամբ ավարտել է հիշյալ ֆակուլտետն ու ստացել «ֆիզիկոսի» եւ «մանկավարժի» որակավորում: Աշխատանքային կենսագրությունը սկսել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի ընդհանուր ֆիզիկայի ամբիոնում, որպես ավագ լաբորանտ, այնուհետեւ՝ 1983 թվականին տեղափոխվել Կապան ու աշխատանքը շարունակել կրթական համակարգում՝ սկզբում՝ ուսուցիչ, այնուհետեւ զբաղեցրել հիշյալ համակարգի տարբեր պաշտոններ՝ ժողկրթբաժնի մեթոդիստ (1983-1986թթ.), Կապանի N6 դպրոցի ուսմասվար (1986-1988թթ.), ապա՝ նույն դպրոցի տնօրեն (1988-1996թթ.), մարզպետարանի կրթության բաժնի գլխավոր մասնագետ (1996-1997թթ.), ՀՀ ԿԳ նախարարության Սյունիքի մարզային - տարածքային տեսչության պետ (1997-1998թթ.), Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետի տեղակալ (1998-2000թթ.), Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի Կապանի հենակետային վարժարանի տնօրեն (2000-2003թթ.), Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ (2003-2006թթ.), Կապանի թիվ 2 ավագ դպրոցի տնօրեն (2007-2012թթ.):
2012թ. փետրվարից առայսօր աշխատում է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Կապանի մասնաճյուղի, իսկ վերակազմակերպումից հետո՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար:
Համատեղությամբ դասախոս է աշխատել՝ 1984-1987 թվականներին՝ ԵրՊԻ Կապանի ուսումնախորհրդատվական կետում, 2005-2012 թվականներին՝ Գորիսի պետական համալսարանում:
Մշտապես զբաղվել է գիտությամբ. 1999թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Համընդհանուր բնույթի մոդելների դերը եւ դրանց օգտագործման մեթոդիկան ֆիզիկայի ուսուցման գործընթացում» թեմայով եւ ստացել մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2008թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Գիտական իմացության հիմնական մեթոդների կիրառումը ֆիզիկայի ուսուցման գործընթացում» թեմայով եւ ստացել մանկավարժական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2008թ. ստացել է դոցենտի, իսկ 2012 թվականին՝ պրոֆեսորի գիտական կոչում: Հեղինակ է շուրջ վեց տասնյակ գիտական եւ գիտամեթոդական հոդվածների, երեք դասագրքի եւ մեկ ձեռնարկի:
Ամուսնացած է, ունի երկու որդի:

ՍԵՅՐԱՆ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ICo-op նախագծի տեղային համակարգող

Ծնվել է 1945 թվականին Սյունիքի մարզի Կապանի շրջանի Կաղնուտ գյուղում, ծառայողի ընտանիքում: 1953թ. ընդունվել եւ 1963թ. ոսկե մեդալով ավարտել է Կապանի թիվ 1 միջնակարգ դպրոցը: Նույն տարում ընդունվել է ԵրՊԻ-ի ավտոմատիկայի եւ հաշվողական տեխնիկայի ֆակուլտետն «Ավտոմատիկա եւ հեռուստամեխանիկա» մասնագիտությամբ: 1968թ. գերազանցության դիպլոմով ավարտել է հիշյալ ինստիտուտի տեխնիկական կիբեռնետիկայի ֆակուլտետը եւ անցել գիտամանկավարժական աշխատանքի «Ավտոմատիկա եւ հեռուստամեխանիկա» («ԱՀ») ամբիոնում:
1968-1970թթ. ծառայել է բանակում՝ սպայի զինվորական կոչումով:
1970-1971թթ. աշխատել է ԵրՊԻ-ի «ԱՀ» ամբիոնում որպես ասիստենտ:
1971-1974թթ. սովորել է ԵրՊԻ-ի ասպիրանտուրայում: 1974-1978թթ. եւ 1978-1981թթ. աշխատել է ԵրՊԻ-ի «ԱՀ» եւ 1978թ. կազմավորված «Ավտոմատացված կառավարման համակարգեր» («ԱԿՀ») ամբիոնում որպես ասիստենտ, իսկ 1981 թվականից՝ ավագ դասախոս: 1983թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:1984-1992թթ. աշխատել է «ԱԿՀ» ամբիոնում՝ դոցենտ: 1992թ. նշանակվել է «ԱԿՀ» ամբիոնի վարիչի պաշտոնակատար, իսկ 1996թ. ընտրվել նույն ամբիոնի վարիչ:
1997թ. մայիսի 5-ին նշանակվել է ՀՊՃՀ Կապանի կրթահամալիրի (2002 թվականից մասնաճյուղ) տնօրենի պաշտոնակատար: 1999-2012թթ. հասարակական հիմունքներով կատարել է մասնաճյուղի «ԿԱՀ եւ Ի» ամբիոնի վարիչի պարտականությունները: 2003թ. հուլիսին ընտրվել է ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի տնօրեն: 2009թ. վերընտրվել է այդ պաշտոնում եւ պաշտոնավարել մինչեւ 2012թ. փետրվարը: 2012թ. փետրվարից առ այսօր մասնաճյուղի տնօրենի տեղակալն է գիտական աշխատանքների գծով:
2015թ. փետրվարին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ ստանալով տեխնիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան Ե.13.02՝ «Ավտոմատացման համակարգեր» մասնագիտությամբ:
Ունի տպագրված 95 գիտամեթոդական աշխատանք: Հեղինակ է մեկ գիտական մենագրության եւ ՀՀ ԿԳՆ կողմից հաստատված բուհական դասագրքի: Նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանվել է մեկ թեկնածուական եւ 20 մագիստրոսական ատենախոսություն: Ներկայումս ղեկավարում է մեկ հայցորդի թեկնածուական ատենախոսություն: Մասնագիտական վերապատրաստում է անցել Հունաստանում (1996թ., 2000թ.), Ֆրանսիայում (2000թ.), ԱՄՆ-ում (2001թ.), Գերմանիայում (2014թ.), Ավստրիայում (2015թ.):
Պարգեւատրվել է ՀՀ վարչապետի ոսկե հուշամեդալով (2008թ.):
Ամուսնացած է, ունի որդի, դուստր եւ երեք թոռ:

2016թ. փետրվարի 8-ից մինչեւ մարտի 19-ը ՀԱՊՀ-ի Կապանի մասնաճյուղում մշակված երեք ուսումնական մոդուլների կիրառությամբ կազմակերպվեցին փորձնական վարժանքներ ձեռնարկությունների («ԶՊՄԿ», «ԴՓՄԿ», «New Pascal» եւ այլն) 19 աշխատողի եւ մասնաճյուղի ավագ կուրսերի 11 ուսանողի հետ (դասախոս-հրահանգիչներ՝ Ս. Բալասանյան, Հ. Գեւորգյան, Մ. Աղգուլյան): Վարժանքների ընթացքում ուսումնական մոդուլների տեսական նյութի մատուցումն ուղեկցվում էր գործնական եւ լաբորատոր պարապմունքներով՝ օգտագործելով GOLDI լաբորատորիան, Quartus II եւ Atmel Studio թվային կառավարող համակարգերի ավտոմատացված նախագծման ծրագրային միջոցները: Տեսական նյութի ուսումնասիրությունն իրականացվում էր ինչպես ինքուրույնաբար՝ օգտագործելով մասնաճյուղի Moodle համակարգը, այնպես էլ շաբաթօրյա դասախոսությունների միջոցով: Ուսումնական պարապմունքների ավարտից հետո կազմակերպված քննությունների արդյունքում դրական գնահատականներ ստացած ունկնդիրներին տրվեցին միջազգային նմուշի վկայականներ: Ունկնդիրների եւ գործատուների հարցումների արդյունքները ցույց տվեցին, որ ինչպես ուսումնական մոդուլների մշակման մեթոդաբանությունը, այնպես էլ վարժանքների կազմակերպման եւ անցկացման մեթոդիկան հիմնականում ճիշտ է ընտրվել:

Անցկացված փորձնական վարժանքների վերաբերյալ ունկնդիրների ու գործատուների դիտողությունները եւ ցանկությունները հանգամանորեն քննարկվել են ու հաշվի կառնվեն հետագա վարժանքները կազմակերպելիս: Մասնավորապես, ուշադրության է արժանացել վարժանքների ունկնդիր, «Դանդի փրիշս մետալս Կապան» ՓԲ ընկերության SS ոլորտի ճարտարագետ Ս.Բաբայանի առաջարկը՝ վարժանքներն էլեկտրոնային դասագրքերով վարելու մասին, ինչը ցուցադրեց իր մշակած դասագրքի օրինակով: Ուշագրավ է նաեւ նույն ընկերության աշխատակից, մասնաճյուղի SS մասնագիտության ուսանող է. Մեսրոպյանի առաջարկը Arduino ավտոմատացված նախագծման միջավայրում իր մշակած մարդկային զինուժի հայտնաբերման եւ տեղորոշման սարքի մոդելը վարժանքների ընթացքում օգտագործելու վերաբերյալ: Ի դեպ, այդ սարքը, որին նվիրված է է. Մեսրոպյանի դիպլոմային աշխատանքը, արժանացել է ՀՀ պաշտպանության նախարարության ուշադրությանը:

Վարժանքների վերաբերյալ հաշվետվությունն արժանացել է Ավստրիայի «Որակի կատարելագործում, հավաստագրում ու գնահատում» ընկերության հավանությանը:

Հաշվի առնելով փորձնական վարժանքների արդյունքները՝ մշակված մոդուլները երաշխավորվել են ներդրման մասնաճյուղի ուսումնական գործընթացում, «Քոմփյութերների կազմակերպում», «Համակարգերի մոդելավորում», «Տեղեկատվության մշակման եւ կառավարման իրական ժամանակի համակարգեր» դասընթացներում: ■

Բրասովի համալսարանում կազմակերպված վարժանքների մասնակիցները

Վարժանքների կազմակերպում ՀՊՃՀ-ում

Վարժանքների անցկացում Իլմենաուի համալսարանում

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղ

®

Տ. Ֆիտցկեն եւ GOLDI-ի տեխնիկական պատասխանատու Ա. Ավետիսյանը

GOLDI հեռավար հիբրիդային լաբորատորիան

Ասանաճյուղում 2015թ. փետրվարից Իլմենաուի տեխնոլոգիական համալսարանի մասնագետների աջակցությամբ սկսվեցին հիշյալ համալսարանի ինտեգրացված կապի համակարգերի դեպարտամենտի կողմից մշակված, շուրջ 24000 եվրո արժողությամբ GOLDI (Grid of Online Laboratory Devices Ilmenau՝ Իլմենաուի հեռավար լաբորատոր սարքերի ցանց) հեռավար հիբրիդային լաբորատորիայի տեղակայման եւ կարգաբերման աշխատանքները: Հեռավար լաբորատորիայի կազմում գտնվող էլեկտրամեխանիկական մոդելների ու ծրագրային ապահովման տեղադրման եւ կարգաբերման նպատակով 2015թ. հուլիսին Կապանի մասնաճյուղ էին գործուղվել Իլմենաուի համալսարանի մասնագետներ Տոբիաս Ֆիտցկեն եւ Քրիստիան Լյուտցեն:

GOLDI-ն նախատեսված է «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» մասնագիտության մի շարք մասնագիտական առարկաների գործնական ու լաբորատոր պարապմունքների անցկացման համար: Այն հնարավորություն է տալիս զարգացնել ստեղծագործական ճարտարագիտական մտածելակերպ եւ ձեռք բերել գործնական հմտություններ թվային կառավարման համակարգերի մշակման բնագավառում: GOLDI-ն օգտագործվում է համացանցով կազմակերպվող ուսուցման գործընթացում եւ ունի միջազգային մակարդակով հեռավար վերապատրաստման դասընթացներ եւ վարժանքներ կազմակերպելու լայն հնարավորություններ: Բացի այդ, ուսանողությունը հնարավորություն է ստանում պարապմունքներին մասնակցել առավել ճկուն, անհատական դասացուցակով: Նշված առավելությունները միաժամանակ նվազեցնում են ուսումնական ծախսերը եւ բարձրացնում ուսման որակը՝ առաջարկելով մասնագիտական ուսուցման առավել գրավիչ, մատչելի եւ գործնականորեն լայն հնարավորություններով օժտված արդիական միջոցներ:

Բացի ՀԱՊՀ-ի Կապանի մասնաճյուղից, GOLDI լաբորատորիան ձեռք են բերել նաեւ ՀԱՊՀ-ի Երեւանյան կրթահամալիրը, Հայաստանի ամերիկյան եւ Զապորոժիեի ազգային տեխնիկական համալսարանները: Նշված հաստատությունների GOLDI լաբորատորիաները փոխադարձ հասանելի են ուսանողներին http://goldi-labs.net/ վեբ կայքի միջոցով, ինչը հնարավորություն է ընձեռում ուսանողներին հեռավար լաբորատոր գիտափորձեր անցկացնել հիշյալ հաստատություններից յուրաքանչյուրի լաբորատորիայում: ■

Ս. Բալասանյանը եւ Հ. Գեւորգյանը Տ. Ֆիտցկեի հետ քննարկում են GOLDI-ի կարգաբերման հետ կապված խնդիրները

ICo-op նախագծի խորհրդաժողովները

ICo-op նախագծի մեկնարկային խորհրդաժողովը

2012թ. դեկտեմբերի 1-2-ին Իլմենաուի տեխնոլոգիական համալսարանում (Գերմանիա) կայացավ ICo-op նախագծի մեկնարկային խորհրդաժողովը, որին մասնակցել են նախագծի բոլոր տեղային համակարգողները: ՀՊՃՀ-ից հանդիպմանը մասնակցեցին պրոռեկտոր Ռ.Աղգաշյանը եւ Կապանի մասնաճյուղի փոխտնօրեն Ս.Բալասանյանը: Հանդիպման ընթացքում ներկայացվեցին գործընկեր բուհերի եւ ընկերությունների վերաբերյալ տեղեկատվություններ, ինչպես նաեւ շարադրվեցին նախագծի նպատակները, խնդիրները եւ ակնկալվող արդյունքները: Այնուհետեւ հաստատվեցին նախագծի աշխատանքային պլանը եւ բյուջեն՝ ներառյալ ընդհանուր եւ նախագծի յուրաքանչյուր մասնակից բուհի ու ընկերության ծախսերի նախահաշիվները:

ICo-op նախագծի 2-րդ խորհրդաժողովը

2013թ. հունիսի 6-7-ին «Խարկովի պոլիտեխնիկ ինստիտուտ» ազգային տեխնիկական համալսարանում կայացավ ICo-op նախագծի 2-րդ խորհրդաժողովը, որին մասնակցել են նախագծի գործընկեր համալսարանների տեղային համակարգողները: Խորհրդաժողովում ՀՊՃՀ-ն ներկայացրել են պրոռեկտոր Ա.Գրիգորյանը եւ ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի փոխտնօրեն Ս.Բալասանյանը: Քննարկվել են տեղային համակարգողների զեկույցներ մեկնարկային խորհրդակցությունից հետո նախագծի շրջանակներում համալսարանների կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ, աշխատանքային փաթեթների ղեկավարների զեկուցումներն աշխատանքների վիճակի եւ արդյունքների մասին, Training Բրասովում (Ռումինիա) կազմակերպված «ԵՄ-ի լավագույն փորձը» վարժանքների արդյունքները, համալսարանների կողմից հեռավար լաբորատոր սարքավորման ընտրության հետ կապված հարցերը:

Իլմենաուի, Դեուստոյի եւ Բրասովի համալսարանների կողմից առաջարկված երեք հեռավար լաբորատոր սարքավորումներից հայաստանյան բուհերը նպատակահարմար համարեցին ընտրել 24 հազար եվրո արժողությամբ Իլմենաուի տեխնոլոգիական համալսարանի ինտեգրացված հեռահաղորդակցության համակարգերի դեպարտամենտի մշակած GOLDI (Grid of Online Laboratory Devices Ilmenau) հեռավար ինտերակտիվ հիբրիդային լաբորատորիան: Այն առավելագույնս համապատասխանում է տարածաշրջանային աշխատաշուկայում պահանջված Կապանի մասնաճյուղի SS մասնագիտության ուղղվածությանը եւ հնարավորություն է ընձեռում ապահովել շրջանավարտներից պահանջվող հմտությունները եւ կոմպետենցիաները:

ICo-op TEMPUS նախագծի մեկնարկային խորհրդաժողովի մասնակիցներն Իլմենաուի տեխնոլոգիական համալսարանում (Գերմանիա)

ICo-op նախագծի 2-րդ խորհրդաժողովում (Խարկովի համալսարան)

ICo-op նախագծի 4-րդ խորհրդաժողովի մասնակիցները ՀԱՀ-ում (Երեւան)

ICo-op նախագծի 5-րդ խորհրդաժողովում (Բաթում)

ICo-op նախագծի 3-րդ խորհրդաժողովը

2014թ մարտի 24-25-ին Թբիլիսիի «Իլյա Ճավճավաձե» համալսարանում տեղի ունեցավ ICo-op նախագծի 3-րդ խորհրդաժողովը, որտեղ տեղային համակարգողները ներկայացրեցին զեկույցներ 2013թ. հունիսից մինչեւ 2014թ. մարտ ժամանակահատվածում բուհերում ICo-op նախագծի շրջանակներում կատարված աշխատանքների վերաբերյալ: Մասնավորապես, հանգամանալի տեղեկատվություն ներկայացվեց ուսումնական մոդուլների մշակման ընթացքի եւ նախագծի նպատակների ու արդյունքների լուսաբանման մասին: Քննարկվեցին «Ուսումնառության ծառայությունների որակի լավարկում համակարգերի կառավարման միջոցով» թեմայով 09-11.12.2013թ. Երեւանում կազմակերպված վարժանքների արդյունքները: Նախագծի համակարգող Կ. Հենկեն տեղեկացրեց ներկաներին 2014թ. փետրվարի 25-28-ին Պորտոյում (Պորտուգալիա) REV2014 միջազգային գիտաժողովում ICo-op Tempus նախագծին նվիրված հատուկ նիստի մասին, որտեղ զեկուցումով հանդես էր եկել նաեւ ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի փոխտնօրեն Ս. Բալասանյանը:

էջ 12

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղ

®

Ճարտարագիտական մասնագիտությունների աշխատաշուկայի առկա վիճակի եւ զարգացման միտումների համեմատական վերլուծություն

Հարցազրույցների անցկացում «Ֆոկուս» խմբերի եւ Սյունիքի զբաղվածության կենտրոնի մասնագետների հետ

Աշխատաշուկայի ընթացիկ վիճակի եւ պահանջմունքների վերլուծության մեթոդիկայի («Հարցումների եւ ուսումնասիրությունների մեթոդաբանության») ու համապատասխան հարցաթերթիկների մշակման համար անհրաժեշտ, շրջանավարտներից պահանջվող ընդհանուր, մասնագիտական եւ տրանսվերսալ (միջանձնային, միջառարկայական) կոմպետենցիաների բացահայտման նպատակով 2013թ. փետրվարին կազմակերպվել եւ անցկացվել են «Ֆոկուս» խմբային հարցազրույցներ Սյունիքի մարզի արդյունաբերական ձեռնարկությունների եւ ընկերությունների, մասնաճյուղի ուսանողության ու պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ:

2013թ. փետրվարի 2-ին տեղի է ունեցել հանդիպում լեռնահանքային, տեղեկատվական տեխնոլոգիաների եւ շինարարական ոլորտի ձեռնարկությունների ներկայացուցիչների (1-ին «Ֆոկուս» խմբի) հետ հետեւյալ նպատակով.

- տարածաշրջանային աշխատաշուկայի ընթացիկ իրավիճակի բացահայտում եւ վերլուծություն,
- աշխատաշուկայում պահանջարկված մասնագիտական եւ տրանսվերսալ կոմպետենցիաների եւ հմտությունների բացահայտում,
- ճարտարագիտական կրթության զարգացմանը խոչընդոտող պատճառների բացահայտում,
- ձեռնարկություններում անցկացվող պրակտիկաների ընթացքում ձեռք բերված կոմպետենցիաների եւ հմտությունների բացահայտում,
- հարցաթերթիկում ընդգրկվելիք հարցերի շրջանակի որոշում:

2013թ. փետրվարի 7-ին կայացել է հանդիպում մասնաճյուղի դասախոսական կազմի ներկայացուցիչների (2-րդ «Ֆոկուս» խմբի) հետ՝ շրջանավարտներին անհրաժեշտ գիտելիքների եւ հմտությունների վերաբերյալ կարծիքների, պահանջվող ուսումնական մոդուլների բացահայտման եւ հարցաթերթիկներում ընդգրկվելիք հարցերի շրջանակի որոշման նպատակով:

2013թ. փետրվարի 15-ին կազմակերպվել է հանդիպում մասնաճյուղի ՏՏ, ընդերքաբանություն, մետալուրգիա, տնտեսագիտություն եւ կառավարում, շինարարություն մասնագիտությամբ շրջանավարտների ներկայացուցիչների (3-րդ «Ֆոկուս» խմբի) հետ հետեւյալ նպատակով.

- մասնաճյուղում ուսումնառությունից ուսանողների բավարարվածության մակարդակի բացահայտում,
- լաբորատոր սարքավորումներից եւ դրանց օգտագործումից ուսանողների բավարարվածության բացահայտում,
- բուհում ստացած գիտելիքների եւ հմտությունների կարեւորության եւ աշխատանքի տեղավորվելիս դրանց կարեւորության որոշում,
- մասնագիտությամբ աշխատանք գտնելու հնարավորության որոշում,
- հարցաթերթիկում ընդգրկվելիք հարցերի շրջանակի որոշում:

Անցկացված քննարկումների արդյունքում ձեւավորվել են ընդհանուր, մասնագիտական ու տրանսվերսալ կոմպետենցիաները, որոնց շրջանավարտը պետք է տիրապետի աշխատաշուկայում պահանջված լինելու համար:

Համաձայն ICo-op նախագծի պլանի՝ 2013թ. մարտին հարցազրույցներ անցկացվեցին Սյունիքի մարզային զբաղվածության տարածքային կենտրոնի մասնագետների հետ եւ իրականացվեցին կենտրոնի կողմից տրամադրված պետական ծրագրերի, փաստաթղթերի, 2010-2012թթ. մարզի աշխատաշուկայի վերաբերյալ վիճակագրական տվյալների հանգամանալից վերլուծություն եւ անհրաժեշտ ուսումնասիրություններ:

Հարցազրույցների իրականացում ՀԱՊՀ-ի Կապանի մասնաճյուղում եւ արդյունաբերական ձեռնարկություններում

Նախագծի մասնակից բոլոր բուհերի կողմից անցկացված «Ֆոկուս» խմբային հարցազրույցների արդյունքների, զբաղվածության տարածքային կենտրոններում իրականացված ուսումնասիրությունների եւ դրանց հիման վրա արված եզրակացությունների օգտագործմամբ «Խարկովի պոլիտեխնիկական ինստիտուտ» ազգային տեխնիկական համալսարանը մշակել է «Հարցումների եւ հետազոտման մեթոդաբանությունը», ինչպես նաեւ գործատուների, դասախոսների եւ ուսանողների համար նախատեսված հարցաթերթիկներն ու ձեւաթերթերը: Այս մեթոդաբանության եւ հարցաթերթիկների օգտագործմամբ 2013թ. մարտ-ապրիլ ամիսներին հարցումներ են անցկացվել Կա-

Արդյունաբերական եւ բազային ուսումնական մոդուլների մշակում

Համաձայն ICo-op նախագծի պլանի, 2014թ. հունվարից նախագծի մասնակից բուհերը ձեռնամուխ եղան արդյունաբերությունում աշխատող մասնագետների եւ բարձր կուրսերի ուսանողների վարժանքների համար նախատեսվող, Եվրոմիության պահանջներին համապատասխանող ուսումնական մոդուլների մշակմանը: Հաշվի առնելով Սյունիքի տարածաշրջանի ճարտարագիտական մասնագիտությունների աշխատաշուկայում կատարված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտված կարիքները, պահանջմունքները եւ կոմպետենցիաները, ինչպես նաեւ GOLDI հեռավար լաբորատորիայի բնույթը՝ ընտրվեցին հետեւյալ երեք մոդուլները.

- «Թվային համակարգերի քոմփյութերային մոդելավորում արագ նախատիպավորման մեթոդի կիրառությամբ» (արդյունաբերական մոդուլ),
- «Տեխնոլոգիական գործընթացների քոմփյութերացված կառավարում ներդրված կոնտրոլերների կիրառությամբ» (արդյունաբերական մոդուլ):
- «Թվային կառավարող համակարգերի նախագծում» (բազային մոդուլ):

Վերոնշյալ մոդուլներից առաջին երկուսը նախատեսված են տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) եւ ավտոմատացման ոլորտի արդյունաբերական մասնագետների վերապատրաստման համար, իսկ երրորդ մոդուլը՝ ՏՏ մասնագիտության ուսանողների խորացված ուսուցման համար:

Վարժանքների կազմակերպում Իլմենաուի տեխնոլոգիական համալսարանում

2014թ. հունիսի 16-ից մինչեւ 20-ը Իլմենաուի տեխնոլոգիական համալսարանում ուսումնական մոդուլների մշակման մեթոդների եւ հեռավար լաբորատորիաների ուսումնասիրման նպատակով կազմակերպվեցին վարժանքներ, որոնցում ներգրավվել էին ICo-op Tempus նախագծի բոլոր մասնակից բուհերի եւ գործընկեր ընկերությունների ներկայացուցիչները: ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղից վարժանքներին մասնակցեցին մասնաճյուղի փոխտնօրեն, տեղային համակարգող Ս. Բալասանյանը, դասախոսներ Հ. Գեւորգյանը եւ Մ. Աղագուլյանը: Բուհերի տեղային համակարգողները ներկայացրեցին ուսումնական մոդուլների համառոտ նկարագրությունները, դրանց մշակման ընթացքը եւ քննարկեցին մոդուլների լաբորատոր մասի մշակման ընթացքում ծագած դժվարությունները: Գործընկեր ընկերությունների ներկայացուցիչները ներկայացրին իրենց ընկերությունները:

Իլմենաուի, Բրասովի, Դեուստոյի եւ Կերնթենի համալսարանների ներկայացուցիչները հանգամանորեն ներկայացրեցին համալսարանների կողմից մշակված հեռավար լաբորատորիաները (GOLDI, LabVIEW, NI Lab, WebLab Deusto, ISA) եւ այլ մշակումներ (շարժունակ ռոբոտներ): Տեսական դասընթացների ավարտից հետո վարժանքի մասնակիցներին ծանոթացրին GOLDI հեռավար լաբորատորիայի սարքերին, դրանց տեղադրման, կարգաբերման եւ շահագործման առանձնահատկություններին, ինչպես նաեւ Իլմենաուի տեխնոլոգիական համալսարանի ուսումնական գործընթացում ներդրված մյուս լաբորատոր սարքերին: Վարժանքի ընթացքում ստացած տեսական եւ գործնական գիտելիքները կարեւոր ու օգտակար էին հատկապես Հայաստանի եւ Ուկրաինայի բուհերի համար, որոնք ընտրել էին GOLDI հեռավար լաբորատորիան: Վարժանքի շրջանակներում կազմակերպվեց մասնակիցների այցելություն Թուրինգիայի մայրաքաղաք Էրֆուրտ եւ հնարավորություն ընձեռվեց ծանոթանալու Իլմենաուի գեղատեսիլ բնությանը:

ICo-op նախագծի վարժանքների դասախոս-հրահանգիչների խորհրդաժողովը

2015թ. հունվարի 11-12-ին Ավստրիայի կիրառական գիտությունների համալսարանում (Վիլլախ) տեղի ունեցավ ICo-op նախագծի շրջանակներում կազմակերպվելիք վարժանքների դասախոս-հրահանգիչների խորհրդաժողով, որին մասնակցեցին վարժանքների ապագա դասախոս-հրահանգիչները: ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղից խորհրդաժողովին մասնակցեցին նախագծի տեղային համակարգող Ս. Բալասանյանը եւ դասախոս-հրահանգիչ Հ. Գեւորգյանը: Մասնակիցները հանգամանորեն ներկայացրեցին բուհերի կատարող խմբերի կողմից մշակված ուսումնական մոդուլները, դրանց կիրառությամբ փորձնական վար-

Ուսումնական մոդուլների քննարկում Վիլլախում (Ավստրիա)

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղ

®

պանի մասնաճյուղի տեղեկատվական տեխնոլոգիաներ, օգտակար հանածոների հետախուզում եւ մշակում, մետալուրգիա, տնտեսագիտություն եւ կառավարում մասնագիտությունների 40 ուսանողի, նրանց դասավանդող 20 դասախոսի, SS ու հանքարդյունաբերության ոլորտների գործատու ձեռնարկությունների 20 ներկայացուցչի հետ:

Հարցումների տվյալների եւ հետազոտման արդյունքների հիման վրա բացահայտվել են գործատուների ու Կապանի մասնաճյուղի տեսանկյունից կարեւոր համարվող հմտությունները եւ կոմպետենցիաները, որոնք պետք է ունենան բուհերի շրջանավարտները Սյունիքի տարածաշրջանի մասնագիտական աշխատաշուկայում պահանջարկված լինելու համար: Այս արդյունքներն անհրաժեշտ են ինչպես մասնաճյուղի մասնագիտական դասընթացների ճիշտ կազմակերպման եւ ուսումնական մոդուլների նպատակային մշակման, այնպես էլ դրանց կիրառությամբ իրականացվելիք վարժանքների ու վերապատրաստման դասընթացների մեթոդաբանության ընտրության համար:

Վարժանքներ Բրասովի Տրանսիլվանիա համալսարանում (Ռումինիա)

2013թ. մայիսի 15-17 Ico-op TEMPUS նախագծի շրջանակներում կազմակերպվել էին ««Բուհը կարիերային» ծրագրի Եվրոմիության լավագույն փորձը» խորագրով վարժանքները: Վարժանքների հիմնական նպատակն էր ծանոթացնել գործընկեր երկրների համալսարանների ներկայացուցիչներին Բրասովի Տրանսիլվանիա համալսարանի հեռավար լաբորատորիաների LabVIEW ծրագրային միջավայրի վիրտուալ գործիքամիջոցներին: ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղից վարժանքներին մասնակցեցին լաբորատորիայի վարիչ Հ.Գեւորգյանը եւ դասախոս Հ. Սահակյանը: Վարժանքները ներառում էին տեսական դասընթացներ («Հեռավար փորձարարության» պատմություն, LabVIEW վիրտուալ գործիքամիջոցներ, NI ELVIS-ի ֆունկցիոնալ հնարավորությունները, հեռավար լաբորատորիաների i-LAB-MIT համակարգ) եւ գործնական պարապմունքներ (NI ELVIS, iLAB-MIT, Արեւային հեռավար լաբորատորիաներ): Վարժանքների շրջանակներում կազմակերպվեց նաեւ կարճ այցելություն Բրասովի արտադրական ընկերություն:

Վարժանքների կազմակերպում ՀՊՃՀ-ում

ICo-op նախագծի շրջանակներում 2013թ. դեկտեմբեր 9-11-ը «Ուսումնառության ծառայությունների որակի լավարկում համակարգերի կառավարման միջոցով» թեմայով վարժանքներ կազմակերպվեցին ՀՊՃՀ ինովացիոն կենտրոնի մասնաշենքում: Վարժանքները բարձր մակարդակով վարում էր Ավստրիայի «Որակի կատարելագործում, հավաստագրում ու գնահատում» ՍՊԸ աշխատակցուհի Անի Կուբեկը: Վարժանքներին մասնակցում էին ՀՊՃՀ Երեւանի կրթահամալիրի եւ Կապանի մասնաճյուղի աշխատակիցները (Ս. Բալասանյան, Ա. Այվազյան), ներկայացուցիչներ՝ Խարկովի պոլիտեխնիկական ինստիտուտից, Իվանո-Ֆրանկովսկի նավթի եւ գազի, Զապորոժիեի ազգային տեխնիկական եւ Հայաստանի ամերիկյան համալսարաններից:

Վարժանքների ընթացքում մասնակիցները ծանոթացան բարձրագույն կրթության բնագավառում կիրառվող կառավարման եվրոպական սկզբունքներին ու չափանիշներին (ISO վարման եվրոպական սկզբունքներին ու չափանիշներին (ISO ստանդարտներին), ինչպես նաեւ դիտարկվեցին բարձրագույն կրթության որակի հայեցակարգի առանցքային դրույթները, որոնց շարադրումն ուղեկցվում էր գործնական քննարկումներով:

Վարժանքների մասնակիցներին հնարավորություն ընձեռվեց այցելել Երեւանի տեսարժան վայրեր, էջմիածին եւ Գառնի-Գեղարդ համալիր:

■

ժանքների անցկացման մեթոդաբանությունը եւ ունկնդիրների իրազեկման ու հավաքագրման կազմակերպչական միջոցները: Ս.Բալասանյանը ներկայացրեց Կապանի մասնաճյուղի թիմի կողմից մշակված հետեւյալ ուսումնական մոդուլները.

- «Թվային համակարգերի քոմփյութերային մոդելավորում արագ նախատիպավորման մեթոդի կիրառությամբ»՝ արդյունաբերական մոդուլ (մշակող՝ Ս.Բալասանյան),
- «Տեխնոլոգիական գործընթացների քոմփյութերացված կառավարում ներդրված կոնտրոլերների կիրառությամբ» արդյունաբերական մոդուլ (մշակողներ՝ Ս. Բալասանյան, Հ.Գեւորգյան),
- «Թվային կառավարող համակարգերի նախագծում»՝ բազային մոդուլ (մշակողներ՝ Ս.Բալասանյան, Մ.Աղագուլյան):

Ներկայացված մոդուլներն արժանացան ICo-op նախագծի մոդուլների մշակման պատասխանատուի եւ Ավստրիայի «Որակի կատարելագործում, հավաստագրում ու գնահատում» ընկերության ներկայացուցչի հավանությանը եւ երաշխավորվեցին ներդրման:

Վերոնշյալ մոդուլները տեղադրված են մասնաճյուղի moodle.haphkapan.com կայքում եւ հասանելի են ինչպես ուսանողներին, այնպես էլ արտադրության մասնագետներին:

Ուսումնական մոդուլների քննարկում Վիլլախում (Ավստրիա)

ICo-op նախագծին նվիրված գիտաժողովը

2015թ. հոկտեմբերի 8-9-ին Դեուստոյի համալսարանում (Բիլբաո, Իսպանիա) տեղի ունեցավ ICo-op նախագծին նվիրված գիտաժողով, որին մասնակցեցին նախագծի մասնակից բոլոր բուհերի եւ գործընկեր ընկերությունների ներկայացուցիչները: ՀՊՊՀ-ի Կապանի մասնաճյուղից գիտաժողովին մասնակցեցին նախագծի տեղային համակարգող Ս. Բալասանյանը եւ դասախոս Հ. Գեւորգյանը: Գիտաժողովում ներկայացվեցին ICo-op նախագծի հիմնական արդյունքները եւ որոշ հիմնախնդիրներ՝ կապված GOLDI լաբորատորիայի սարքավորումների առաքման ժամկետների ուշացման հետ: Այդ կապակցությամբ որոշվեց ICo-op նախագծի գործողության ժամկետը վեց ամսով երկարաձգելու խնդրանքով դիմել Եվրոհանձնախմբին: Գիտաժողովի մասնակիցներին հնարավորություն ընձեռվեց այցելելու Բիլբաոյի՝ Իսպանիայի հնագույն քաղաքներից մեկի, տեսարժան վայրերը:

Գործընկերների միջեւ ուսումնական մոդուլների փոխանակում եւ թարգմանում

Բացի սեփական մոդուլների մշակումից, ICo-op նախագծի պլանով նախատեսված է նաեւ գործընկեր բուհերի միջեւ անգլերենով գրված հինգ ուսումնական մոդուլի փոխանակում եւ թարգմանում ազգային լեզուներով: Ելնելով մշակված մոդուլների թեմաների բնույթից եւ Կապանի մասնաճյուղի կարիքներից՝ ընտրվել եւ թարգմանվել են հետեւյալ մոդուլները.

- նորարարական ձեռնարկությունների աշխատուժի կառավարում (տրանսվերսալ մոդուլ, Զապորոժիեի համալսարան),
- տեղեկատվական համակարգերի որակը (բազային մոդուլ, Զապորոժիեի համալսարան),
- հեռավար եւ վիրտուալ տեխնոլոգիաներ ու համակարգեր (արդյունաբերական մոդուլ, Զապորոժիեի համալսարան),
- մտավոր սեփականության պաշտպանություն (բազային մոդուլ, Իլյա համալսարան)
- NI ELVIS-ը եւ LabVIEW-ն արդյունաբերությանը (արդյունաբերական մոդուլ, Իլյա համալսարան):

Թարգմանված մոդուլները նույնպես տեղադրված են մասնաճյուղի moodle.haphkapan.com կայքում եւ հասանելի են ուսանողներին եւ արտադրության մասնագետներին: ■

ICo-op նախագծի գործընկեր ընկերությունները

Ավստրիայի «Որակի կատարելագործում, հավաստագրում ու գնահատում» ՍՊԸ

www.qualityaustria.com

«Quality Austria» ընկերությունն իրականացնում է ուսուցում (վարժանք), հավաստագրում, գնահատում եւ վավերացում: Այն հիմնադրվել է 2004թ. Վիեննայում: Ընկերությունը որակի կառավարման ինտեգրացված համակարգերի եւ ճյուղային ստանդարտների բնագավառի ազգային առաջատարն է: Ընկերության կողմից առաջարկվող ծառայությունները ներառում են նաեւ որակի կառավարման եւ հավաստագրման ոլորտի մասնագետների պատրաստում: «Quality Austria»-ի ավելի քան 500 հրահանգիչներ, աուդիտորներ եւ տեխնիկական փորձագետներ ապահովում են ընկերության հաջող գործունեությունը: Ընդհանուր առմամբ «Quality Austria»-ն համագործակցում է արեւելյան եւ հարավարեւելյան Եվրոպայի, հյուսիսային Աֆրիկայի ու Ասիայի շուրջ 50 երկրի 100 անդամ կազմակերպությունների հետ:

«Նեյշնլ ինսթրումենթս» (ԱՄՆ)

www.ni.com

«National Instruments» (NI) ընկերությունը հիմնադրվել է 1976թ. ԱՄՆ-ի Օստին քաղաքում: Այն առաջատար գլոբալ բարձր տեխնոլոգիական ընկերություն է, որն ավտոմատացված չափիչ տեխնիկայի եւ վիրտուալ գործիքամիջոցների ծրագրային ապահովման արտադրության բնագավառում իրականացնում է ուղղակի գործունեություն 41 երկրում՝ ներառյալ Հայաստանում: 2005թ. NI ընկերությունը Հայաստանում ստեղծել է իր մասնաճյուղը, որը ներկայումս ունի շուրջ 50 աշխատող:

NI-ն ուսումնական ծրագրեր է իրականացնում ավելի քան 110 երկրում:

«Սինոփսիս Արմենիա» ՓԲԸ (Հայաստան)

www.synopsys.com

Էլեկտրոնային նախագծման ավտոմատացման ծրագրային ապահովման բնագավառի առաջատար «Սինոփսիս» ընկերության «Սինոփսիս Արմենիա» մասնաճյուղը հիմնադրվել է 2004թ. Երեւանում: Այն «Սինոփսիս»-ի ԱՄՆ-ից դուրս գտնվող ամենամեծ մասնաճյուղն է եւ իր 570 աշխատողով SS ոլորտի խոշորագույն գործատուն է Հայաստանում: «Սինոփսիս»-ը սերտ կապեր է հաստատել մեծաթիվ համալսարանների հետ, ներառյալ ՀԱՊՀ-ը, որի հետ համագործակցության արդյունքում ստեղծված ընկերության Երեւանի ուսումնական դեպարտամենտն այսօր ներառում է շուրջ 300 ուսանող եւ 50 դասախոս: «Սինոփսիս Արմենիա»-ն հաջողությամբ մի քանի նախագծեր է իրականացրել կրթական բարեփոխումների ոլորտում:

ICo-op նախագծի մյուս գործընկեր ընկերություններն են.

- «Էկոլոգիական համակարգեր» ՍՊԸ (Ուկրաինա),
- «ՁՈՆԴ» գիտաարտադրական ընկերություն (Ուկրաինա),
- «SS մասնագետների Ուկրաինական ասոցիացիա» (Ուկրաինա),
- Խարկով Օնլայն բաժնետիրական համատեղ ընկերություն (Ուկրաինա),
- «Ուկրաինական արդյունաբերական էներգիա» ՓԲԸ (Ուկրաինա),
- «Տրանսֆորմատոր եւ էլեկտրասարքավորումներ» ընկերություն (Վրաստան),
- «LEPL Միկրո եւ նանոէլեկտրոնիկայի ինստիտուտ» (Վրաստան):

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղ

®

Ք.Կապան

ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ICo-op ՆԱԽԱԳԾԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀԱՊՀ-ի Կապանի մասնաճյուղում ICo-op TEMPUS նախագծի կատարման ընթացքում ստացվել են հետեւյալ հիմնական արդյունքները:

- Սյունիքի տարածաշրջանի արդյունաբերական ձեռնարկություններում, Կապանի մասնաճյուղում եւ ճարտարագիտական մասնագիտությունների աշխատաշուկայում կատարված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են աշխատաշուկայում ճարտարագետների պահանջարկված լինելու համար անհրաժեշտ հմտությունները եւ կոմպետենցիաները:
- Ելնելով ճարտարագետներին անհրաժեշտ հմտություններից եւ կոմպետենցիաներից՝ ընտրվել եւ մասնաճյուղում տեղակայվել է GOLDI հեռավար հիբրիդային լաբորատորիան, մշակվել են համապատասխան ուսումնական մոդուլներ, որոնց միջոցով անցկացվել են փորձնական վարժանքներ ձեռնարկությունների մասնագետների եւ մասնաճյուղի ուսանողների հետ:
- Կապանի մասնաճյուղում ներդրվել են ուսումնական գործընթացի կազմակերպման մոդուլային սկզբունքը եւ Moodle էլեկտրոնային ուսուցման համակարգը:
- ICo-op նախագծի շրջանակներում մշակված մոդուլները ներդրվել են մասնաճյուղի ուսումնական գործընթացում եւ հիմք են ծառայել համապատասխան ուսումնամեթոդական գրականության մշակման համար:
- ICo-op նախագծի շրջանակներում եվրոպական առաջատար համալսարաններում վերապատրաստման դասընթացներ եւ վարժանքներ է անցել Կապանի մասնաճյուղի հինգ աշխատակից:
- Շնորհիվ ICo-op նախագծի արդյունքների ներդրման, ՀԱՊՀ-ի Կապանի մասնաճյուղը, ըստ էության, դարձել է ՏՏ ոլորտի մասնագետների տարածաշրջանային մշտական գործող վարժանքի կենտրոն, ինչն ընդլայնել ու սերտացրել է համալսարան-արդյունաբերություն համագործակցությունը եւ օժանդակում է շրջանավարտների աշխատանքի տեղավորմանը:
- Օգտագործելով ICo-op նախագծի վերը նշված արդյունքները՝ ՀԱՊՀ-ի Կապանի մասնաճյուղը կարող է որոշակի դերակատարություն ունենալ ՀՀ ռազմաարդյունաբերական համալիրի ՏՏ ոլորտի մասնագետների հեռավար վերապատրաստման եւ այդ ոլորտի նորարարական խնդիրների (զինատեսակների հեռակառավարման եւ ավտոմատացված կառավարման համակարգերի մշակման) լուծման ասպարեզում:
- ICo-op նախագծի արդյունքներն ընդհանուր առմամբ որոշակիորեն նպաստել են հասարակության մեջ ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի դերի ամրապնդմանը եւ վարկանիշի բարձրացմանը, շարունակական կրթության զարգացմանն ու մասնագիտական աշխատաշուկայի հետ կապերի հաստատմանը:

«Lambert Academic Publishing» (Գերմանիա) միջազգային հրատարակչությունը սեփական նախաձեռնությամբ լույս է ընծայել ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի տնօրենի գիտական աշխատանքների գծով տեղակալ, տեխնիկական գիտությունների դոկտոր Ս.Շ. Բալասանյանի «Բարդ տեխնոլոգիական համակարգերի ստրատիֆիկացված համակարգերի մոդելավորում» գիտական մենագրությունը: Այն նվիրված է տարրերի հուսալիության հաշվառմամբ բարդ տեխնոլոգիական համակարգերի գործունեության արդյունավետությունը նմանակային մոդելավորման մեթոդով հետազոտելիս դրանց վիճակների տարածության մեծ չափողականության հաղթահարման հիմնախնդրի լուծմանը: Մենագրությունում մշակված է ստրատիֆիկացված ձեւայնացման մեթոդ եւ ընդհանրական մաթեմատիկական մոդել, որոնք թույլ են տալիս հաղթահարել որոշակի դասի բազմավիճակ բարդ տեխնոլոգիական համակարգերի ձեւայնացման դժվարությունները:

Առաջարկված ձեւայնացման մեթոդը եւ ընդհանրական մոդելն օգտագործվել են Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հանքաքարի մանրացման համակարգի ստրատիֆիկացված ու հանքանյութի ֆլոտացման գործընթացի կառավարման քոմփյութերային մոդելների մշակման համար:

Մենագրությունը նախատեսված է բազմավիճակ բարդ համակարգերի համակարգային վերլուծության եւ մոդելավորման բնագավառի մասնագետների համար: Այն կարող է օգտակար լինել նաեւ համապատասխան մասնագիտությունների ասպիրանտների, մագիստրանտների եւ բարձր կուրսերի ուսանողների համար: ■

> Հայաստանի ազգային տրանսֆերային համալսարանի Կապանի մասնաճյուղ

ICo-op նախագծի խորհրդաժողովները

էջ 9

ICo-op նախագծի 4-րդ խորհրդաժողովը

2014թ օգոստոսի 25-26-ին Հայաստանի ամերիկյան համալսարանում տեղի ունեցավ ICo-op նախագծի 4-րդ խորհրդաժողովը, որտեղ տեղային համակարգողները ներկայացրեցին ուսումնական մոդուլների մշակման գործընթացի առկա վիճակը, հիմնախնդիրները եւ քննարկվեցին դրանց հաղթահարման ուղիները: Քննարկվեց ICo-op նախագծի միջանկյալ հաշվետվության վերաբերյալ Եվրահանձնաժողովի եզրակացությունը: Դիտարկվեցին նաեւ ուսումնական մոդուլների թարգմանության եւ այդ մոդուլների կիրառությամբ փորձնական վարժանքների կազմակերպման հարցեր:

Կազմակերպվեց խորհրդաժողովի մասնակիցների այցելություններ Գառնի-Գեղարդ եւ Երեւանի կոնյակի գործարան:

ICo-op նախագծի 5-րդ խորհրդաժողովը

2015թ. հունիսի 29-30-ին Բաքումի «Շոթա Ռուսթավելի» պետական համալսարանում կայացավ ICo-op նախագծի 5-րդ խորհրդաժողովը, որտեղ տեղային համակարգողները ներկայացրեցին համառոտ զեկույցներ 2014թ. սեպտեմբերից մինչեւ 2015թ. հունիս ընկած ժամանակահատվածում նախագծի շրջանակներում կատարած աշխատանքների, ուսումնական մոդուլների վերջնական կարգավիճակի եւ այդ մոդուլների կիրառությամբ իրականացված որոշ փորձնական վարժանքների արդյունքների մասին: Քննարկվեցին նաեւ նախագծի մասնակից բուհերի միջեւ ուսումնական մոդուլների փոխանակման եւ այդ մոդուլների ազգային լեզուներով թարգմանության հետ կապված հարցերը:

Խորհրդաժողովի մասնակիցներն այցելեցին Բաքումի տեսարժան վայրերը:

ICo-op նախագծի եզրափակիչ խորհրդաժողովը

2016թ. ապրիլի 1-ին Կիեւի ազգային էրազմուս գրասենյակում կայացավ ICo-op նախագծի եզրափակիչ 6-րդ խորհրդաժողովը, որին մասնակցեցին նախագծի բոլոր տեղային համակարգողները: Խորհրդաժողովում քննարկվեցին 2015թ. հունիս-ապրիլ ժամանակահատվածում մասնակից բուհերում կատարված աշխատանքները եւ յուրաքանչյուր բուհի ներդրումը ողջ նախագծում ըստ հետեւյալ թեմաների.

- Ակնարկ լաբորատորիաների թողարկման եւ հետագա շահագործման մասին,
- Հեռավար լաբորատորիաների ներդրումն ուսումնական գործընթացում:
- Ուսումնական մոդուլների վերջնական կարգավիճակը,
- Մոդուլների էլեկտրոնային ուղեցույցը եւ հետագա շահագործումը,
- Անցկացված վարժանքների վերջնական կարգավիճակը եւ արդյունքները,
- Վարժանքների գնահատման հաշվետվության քննարկում,
- ICo-op նախագծի նպատակների եւ արդյունքների լուսաբանումը,
- Նախագծի հաշվետվության կառուցվածքը եւ մասնակիցների ներդրումները:

■

Ինչպե՞ս կհատուցվի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասը

Մայիսի 14-ին Սիսիանի քաղաքապետարանում հրավիրվել էր համայնքի ղեկավար Աղասի Հակոբջանյանի՝ ս/թ ապրիլի 2-ի կարգադրությամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության զինծառայողներին եւ կամավորականներին նյութական օժանդակության տրամադրման աշխատանքները համակարգող շտաբի նիստ: Քննարկման թեման «Որոտան» թերթի էլեկտրոնային տարբերակում մայիսի 12-ին հրապարակված «ՕԳՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՎՔՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ ՕԱԽՍԵԼ ԵՆ ... ՀԱՑ ՈՒՏԵԼՈՒ ՎՐԱ՞» վերտառությամբ հոդվածն էր:

Ահա Սիսիանի քաղաքապետարանի պաշտոնական հաղորդագրությամբ հրապարակված ծախսերը մայիսի 4-ի դրությամբ՝	
Թաղման արարողությունների ծախս	2 602 370
Վառելիքի ծախս	396 700
Արցախ առաքված սնունդ	2 318 530
Մեքենայի վերանորոգման ծախս	130 000
ԸՆԴԱՄԵՆԸ ՇԱԽՍ	**5 447600**
ՄՆԱՑՈՐԴ	**1 657400**

Հոդվածագիրը, հղում կատարելով քաղաքապետարանի պաշտոնական հաղորդագրությանը (որտեղ, ի դեպ, մանրամասն հաշվետվություն է ներկայացվել, թե որքան գումար է հանգանակվել եւ որտեղ է ծախսվել այդ գումարը մայիսի 4-ի դրությամբ (ոչ թե ապրիլի 4-ի, ինչպես գրել է «Որոտանը»)), նշել է, որ հանգանակվել է 7 միլիոն 105 հազար դրամ գումար, այնուհետեւ հավելել. *«Ըստ Սիսիանի քաղաքապետարանի պաշտոնական հաղորդագրության, պարզվում է, սակայն, որ Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության զինծառայողներին եւ կամավորականներին նյութական օժանդակության տրամադրման նպատակով սիսիանցիների հանգանակած գումարը ծախսվել է ոչ թե բանակի եւ խրամատում հայրենիքի համար մարտնչող զինվորի կարեւորագույն կարիքները հոգալու, այլ՝ ... հաց ուտելու, ինչ-որ մեքենայի վերանորոգման, ինչ-որ վառելիքի ծախսեր անելու վրա...»:*

Ստացվում է, որ հոդվածագիրը «հաց ուտել» ասելով նկատի ունի սիսիանցի 9 զոհերի թաղման արարողությունների կազմակերպումը: Շտաբի անդամները վրդովված են. սա վիրավորանք է ոչ միայն շտաբի անդամների, Սիսիանի բնակչության, այլեւ իրենց կյանքը հայրենիքին զոհաբերած կամավորականների ընտանիքների հասցեին:

Շտաբի պետ Աղասի Հակոբջանյանի տեղեկացմամբ՝ շտաբը բարեխղճորեն արձանագրել է յուրաքանչյուր սիսիանցու ներդրումը, նպատակային ծախսել յուրաքանչյուր լուման: Դժվարին այս պահին մարդկային կորուստներ կրած Սիսիանում մթնոլորտ պղտորելը դատապարտելի է եւ համապատասխան գնահատականի պետք է արժանանա: Հոդվածագիրը աղավաղել է պաշտոնական հաղորդագրությունը, շփոթության մեջ գցել ընթերցողին, զրպարտել, անհիմն մեղադրել հայրենանվեր գործ կատարած մարդկանց:

Ի դեպ, հոդվածն արտատպվել է նաեւ այլ էլեկտրոնային լրատվամիջոցներում՝ թյուր կարծիքների ու մեկնաբանությունների տեղիք տալով, մեկնաբանություններ, որոնք հարիր չեն սիսիանցու կերպարին ու հեղինակությանը:

Շտաբի նիստին հրավիրվել էր նաեւ հոդվածագիր Արեւհատ Ամիրյանը, ով այդպես էլ չներկայացավ:

Այնուամենայնիվ, առաջարկ եղավ պահանջել լրատվամիջոցից տպագրել հերքում, այլապես ստիպված կլինեն ընտրել պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման՝ ՀՀ քաղօրենսգրքի 1087.1-րդ հոդվածով մատնանշված՝ ասել է թե՝ դատական ճանապարհը:

sisian.info, 16 մայիսի 2016թ.

Ինչո՞ւ են մայրաքաղաքում գործող որոշ տնտեսվարողներ գերադասում գրանցված լինել Սյունիքում

î Ý ï »ëáõÃÛáõÝ

Մի քանի օր է, ինչ հրապարակվել է ՀՀ հարկային ծառայության տեղեկատվական ցանկը՝ 2016թ. առաջին եռամսյակում 1000 խոշոր հարկ վճարողների եւ նրանց կողմից վճարված հարկերի ու տուրքերի մասին:

ՑԱՆԿ

2016 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍԿԶԲԻՑ ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏ ԱՄԻՍՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԻՆ 1000 ԽՈՇՈՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՏՈՒՐՔԵՐԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (Սյունիքի մարզ, հազար դրամ)

Հ/Հ	Հարկ վճարողի անվանումը	Հարկ վճարողի գտնվելու վայրը	Ընդամենը	ուղղակի հարկեր (այդ թվում՝ շահութահարկ, եկամտային հարկ)
11	ՋԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ	ՔԱՋԱՐԱՆ	1,990,540.1	1,042,690.9
48	ԴԱՆԴԻ ՓՐԻՇՍ ՄԵԹԱԼՍ ԿԱՊԱՆ	ԿԱՊԱՆ	568,974.4	220,000.0
107	ՈՐՈՏԱՆԻ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ	ԳՈՐԻՍ	252,105.1	252,000.0
122	ԱԳԱՐԱԿԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ	ԱԳԱՐԱԿ	226,945.5	142,440.0
144	ԱՐՊԱՆԻՎ	ԳՈՐԻՍ	185,233.8	30,053.2
287	ՍԻՍԻԱՆԻ ԲԵՌՆԱՈՒՂԵՎՈՐԱՏԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ	ՍԻՍԻԱՆ	81,886.1	10,911.4
352	ՄԵՂՐՈՒ ՃՇՇՁ	ՄԵՂՐԻ	68,359.6	17,600.0
375	ԿԱՊԱՆ ԷՆԵՂԺԻ	ԿԱՊԱՆ	63,240.5	15,050.0
379	ԱՐՄԵՆԻԱՆ ՄԱՅՆԻՆԳ ՔՈՆԹՐԱՔԹՈՐ	ՔԱՋԱՐԱՆ	62,633.3	29,777.5
462	ԲԱՁԱԼՏ ԷՄ	ՍԻՍԻԱՆ	50,345.3	5,775.0
470	ՎԱՅԲԼ	ԿԱՊԱՆ	49,741.7	14,276.1
653	ԷՆԴԻ	ՍԻՍԻԱՆ	34,002.1	90.0
688	ՇԱՀՐ	ԿԱՊԱՆ	32,057.5	22,476.0
711	ԼԵՌ ԷՔՍ	ԿԱՊԱՆ	30,854.3	28,562.6
764	ԱԼ ԽԱԼԻԴԻԱ ՏՈՒՐԻԶՄ	ՍԻՍԻԱՆ	28,159.3	843.3
774	ԿՐԻԿԱՄՈՆ	ԿԱՊԱՆ	27,623.6	5,015.9
797	ԿԱՊԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ	ԿԱՊԱՆ	26,830.8	16,741.9
807	ԱԳ ԲԻԶՆԵՍ	ԱԳԱՐԱԿ	26,490.4	1,470.0
814	ՎԻԼԼԱ ՕՅԼ	ԱԳԱՐԱԿ	26,150.9	1,300.0
844	ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	ԿԱՊԱՆ	24,970.5	23,700.0
917	ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ	ԳՈՐԻՍ	22,320.0	20,220.0
919	ԿԱՊԱՆԻ ՆՈՐՈԳՇԻՆ	ԿԱՊԱՆ	22,287.0	11,773.8
996	ԿԱՊԱՆԻ ԲԵՌՆԱՈՒՂԵՎՈՐԱՏԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ	ԿԱՊԱՆ	20,293.0	11,327.3

Հավատարիմ մեր թերթի՝ տարիներով ձեւավորված ավանդույթին, այս անգամ եւս հրապարակում ենք խոշոր հարկատուների շարքում տեղ գտած սյունիքյան ձեռնարկությունների ցանկը, ինչը թույլ է տալիս մի քանի եզրակացություն անել:

Նախ՝ Սյունիքում, ինչպես եւ ամբողջ հանրապետությունում, հանքարդյունաբերությունը շարունակում է ծանր ժամանակներ ապրել:

Այսպես, «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ն 2016թ. առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջե է վճարել մոտ 2 մլրդ դրամ (հարկերի ընդհանուր գումարն է), մինչդեռ 2015թ. նույն ժամանակամիջոցում վճարել է մոտ 4 մլրդ դրամ, 2014թ. 1-ին եռամսյակում՝ մոտ 3 մլրդ դրամ, 2013թ.՝ 1-ին եռամսյակում՝ 3,5 մլրդ դրամ:

Կապանի կոմբինատը 2016թ. առաջին եռամսյակում վճարել է մոտ 569 մլն դրամ հարկ, մինչդեռ 2015, 2014 եւ 2013 թվականների նույն ժամանակամիջոցում՝ համապատասխանաբար՝ 890 մլն, 1 մլրդ 418 մլն եւ 1 մլրդ 612 մլն դրամ:

«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ-ն 2016-ի առաջին եռամսյակում վճարել է 227 մլն դրամ, 2015, 2014 եւ 2013 թվականների նույն ժամանակամիջոցում՝ համապատասխանաբար՝ 726 մլն, 865 մլն եւ 641 մլն դրամ:

Երկրորդ, սյունիքյան խոշոր հարկատուների ցանկում դանդաղ, բայց հաստատուն քայլերով փոփոխություններ են տեղի ունենում, ինչն օրինաչափ պիտի համարել հանրապետության ներկայիս տնտեսական հարաբերությունների պայմաններում:

Երրորդ, մի շարք տնտեսվարողներ, գործելով մայրաքաղաքում, գերադասում են գրանցված լինել Սյունիքի մարզի տարբեր բնակավայրերում՝ աչքից հեռու՝ սրտից հեռու:

Չորրորդ, 2016թ. հունվար-մարտ ամիսներին, Սյունիքում գրանցված խոշոր հարկատուները միասին վերցրած պետությանը վճարել են 4 մլրդ 273 մլն 448 հազար 600 դրամ հարկ, իսկ մեկ տարի առաջ՝ 7 մլրդ 399 մլն 183 հազար 600 դրամ (3 մլրդ 125 մլն 735 հազար դրամով պակաս):

Նման իրավիճակների համար է ասված՝ մեկնաբանություններն ավելորդ են:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Նորից այդ չարչրկված վերջին զանգի մասին

ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Եվս մի քանի օր, եւ դպրոցներում կհնչի վերջին զանգը, որի նախապատրաստման աշխատանքները վաղուց են սկսվել: Դպրոցի հետ կապ չունեցող մարդիկ այդ մասին իմանում են ավարտական դասարաններում սովորողների հագուստ-կապուստից: Արդեն ապրիլի սկզբներից սկսած քաղաքներում, ավարտական դասարաններ ունեցող գյուղական բնակավայրերում երեւում են տոնական հագուստներով, կրծքներին խորհրդանշական փոքրիկ զանգերով գեղեցիկ պատանիներ, գեղատեսք օրիորդներ: Նրանք այս տարվա շրջանավարտներն են…

Եվ ինչպես միշտ, այս տարի էլ շրջանավարտների ծնողները, դասավանդող ուսուցիչները, դպրոցների տնօրենները լուրջ հոգսերի տակ են: Մի մասի համար այդ հոգսերը նյութական են, մյուսների համար էլ՝ զուտ աշխատանքային ու բարոյական:

Օրեր առաջ հեռուստադիտողին կրթության եւ գիտության նախարարը տեղին հիշեցրեց՝ ժամանակի թելադրանքն է, որպեսզի տարեվերջյան միջոցառումները լինեն պարկեշտության շրջանակներում:

Նման զգուշացումներ միշտ էլ եղել են, բայց… Եվ հետո էլ՝ ասողին լսող է պետք:

Ինչքան դժվարանում է մեր ապրելակերպը, այնքան ավելանում է վերջին զանգն իրենց երեխաների համար տոնի վերածելու համար ծնողներից պահանջվող գումարը: Եթե տվյալ ընտանիքում կա շրջանավարտ, ապա ընտանեկան բյուջեից այսօր ծախսվում է միջինը մոտ 90 հազար դրամ (որի մեծ մասը հատկացվում է հագուստին, վարսահարդարմանն ու դիմահարդարմանը եւ այլն):

> *Փորձեցինք այս օրերին դրամահավաքության մասին շրջանառվող զրույցների մասին իմանալ մարզպետարանի կրթության վարչության պետ Հովիկ Ալեքսանյանի կարծիքը: Առաջին բանը, որ անհանգստացրեց մարզի հանրակրթության ղեկավարին, այն էր, թե որտեղից ենք ստացել այդ տեղեկատվությունը:*

Հետո իմացանք, որ տնօրենների մասնակցությամբ հուզող հարցին նվիրված խորհրդակցություն է տեղի ունեցել մարզպետարանում, որտեղ ընդարձակ ելույթով հանդես է եկել բնագավառի մարզային ղեկավարը, կոնկրետ առաջադրանքներ տվել նրանց…

Եվ, այդուհանդերձ, գործերի իրական վիճակին ծանոթանալու համար որոշեցինք լինել մեկ-երկու դպրոցում, զրուցել շրջանավարտների, ուսուցիչների, եթե հնարավոր լինի, նաեւ մի քանի ծնողի հետ:

* * *

Զրուցում ենք Ակ.Բակունցի անվան թիվ 1 ավագ դպրոցի տնօրեն Կարինե Մովսիսյանի հետ: Այստեղ պահում են ավանդույթները: Վերջին

զանգի օրը՝ մայիսի 27-ին, դպրոցին հրաժեշտ կտա 81 շրջանավարտ: Այդ օրվա հանդիսավոր ցերեկույթին վաղուց են սկսել նախապատրաստվել, բայց դրամահավաքի մասին խոսք անգամ լինել չի կարող: Մի քանի տարի է, ինչ շրջանավարտների ծնողներն իրենց նախաձեռնությամբ հարազատ օջախներում ընտանեկան տոն են կազմակերպում, օրվա հերոսին շնորհավորելու են գալիս հարազատները, մտերիմները, բայց այն դպրոցի հետ որեւէ առնչություն չունի: Բացի այդ դպրոցի տնօրենությունը հանդիպել է շրջանավարտների ծնողների հետ, հորդորել նրանց խուսափել աղմկոտ ու ծախսատար սեղաններ պատրաստելուց, ավտոմեքենաների ղեկը երեխաներին տրամադրելու վտանգավոր սովորույթից: Դպրոցի տնօրենը համոզված է, որ երկրում գոյություն ունեցող բարոյահոգեբանական իրավիճակից համապատասխան հետեւություններ կանեն նաեւ ավարտական դասարանների ծնողկոմիտեները, որոնք էլ ակնարկված դրամահավաքի կազմակերպիչներն են:

Մի երկու, երեք տասնամյակ առաջ էլ միջնակարգն ավարտելը երեւույթ էր թե նոր կյանք մտնող երիտասարդի եւ թե նրա ծնողների համար: Այն ժամանակ էլ դա նշվում էր հավուր պատշաճի, բայց այդ հավուր պատշաճի ասածը չէր նախատեսում ընտանիքի չունեցած եկամուտի զգալի մասը, այն չէր կարող հասնել տատիկի կամ պապիկի կենսաթոշակի կրկնապատիկին: Ավանդական տոնախմբությունից հետո ընտանիքը չէր հայտնվում պարտքերի տակ: Էլ չենք խոսում հարցի բարոյական կողմի մասին: Բարոյական ասվածը միայն այն չէ, որի մասին օրեր առաջ իր հեռուստաելույթում տեղին ակնարկեց գիտության եւ կրթության նախարարը՝ նկատի ունենալով ապրիլյան պատերազմի նահատակների հիշատակը: Բարոյական չէ մեծ չափերի դրամահավաքը թեկուզ հենց այն պատճառով, որ շրջանավարտների ծնողների մեծ մասը նման հնարավորություններ չունի: Մի՞թե դժվար է պատկերացնել, թե հոգեկան ինչ ապրումներ են ունենում շրջանավարտը, նրա ծնողները, հարազատները մինչեւ այդ գումարը հայթայթելը: Բայց այդ հոգեկան ընկճվածությունը չի վերջանում ավարտական հանդիսության հետ: Այն դեռ երկար օրեր, գուցե նաեւ ամիսներ է շարունակվում, մինչեւ այդ վիճակում գտնվողները կարողանում են առաջին հայացքից չնչին թվացող պարտքի տակից դուրս գալ…

Մտորումներս կիսում եմ Ակ.Բակունցի անվան թիվ 1 ավագ դպրոցի մի խումբ ավարտական դասարանցիների հետ, որոնց հանդիպում եմ դպրոցի բակում: Հուրախություն ինձ, շատ հարցերում նրանք ինձ հետ համամիտ են, բայց եւ չեն թաքցնում, որ այսպես կոչված «քեֆի» համար նախատեսված գումարը քիչ է տարբերվում վերեւում ակնարկած թվից:

Համարյա նույն բովանդակության զրույց էլ ունեցանք Գորիսի մյուս ավագ դպրոցի ավարտական դասարանի տղաների խմբի հետ, որոնց հանդիպեցինք քաղաքային զբոսայգում:

N4 ավագ դպրոցը եւս չորս ավարտական դասարան ունի՝ մոտ 100 աշակերտ: Այս զրույցի ակամա վկան ու մասնակիցն է դառնում Վերիշենի միջնակարգ դպրոցի երկարամյա տնօրեն, հարգված մանկավարժ Մատվեյ Ղազարյանը: Նա էլ է մտահոգված տարեվերջյան սպասվող անցուդարձով: Ավարտական դասարանների երեխաների ծնողներին վերջին անգամ հրավիրել է ծնողական ժողովի՝ այդ հարցերը նրանց հետ քննարկելու: Գոհ է իր սաներից, միայն ափսոսանք է հայտնում, որ վերջին զույգ դասարանն է հրաժեշտ տալիս դպրոցին: Աշակերտների թիվը պակասում է: Մնացած բոլոր դասարանները մեկական են:

Փորձում ենք իմանալ, թե շրջանավարտներն ինչ կարծիքի են այն երեւույթի մասին, երբ ավարտական դասարանցիները վերջին զանգից հետո, հատկապես երեկոյան ժամերին, գերբեռնված ավտոմեքենաների ձայնային ազդանշանները միացրած, մեքենաների աջ ու ձախ պատուհաններից կիսով չափ կախված, գոռում-գոչյունով շրջում են քաղաքի փողոցներով՝ հաճախ վթարային իրավիճակներ ստեղծելով, վտանգի տակ դնելով թե իրենց եւ թե ուրիշների կյանքը:

Ասում են, որ այդ հարցի շուրջ իրենք էլ են խորհել եւ գրել, որ այս տարի, գուցե նաեւ հաջորդ տարիներին, նման բան չլինի:

Հայտնի ճշմարտություն է՝ բոլոր ժամանակներում ավագ սերունդը ժամանակի երիտասարդներից բողոքելու, նրանց վարքն ու բարքը փնովելու առիթը բաց չի թողել: Բայց մեր ժամանակը տարբերվում է անցած-գնացած բոլոր ժամանակներից, որովհետեւ հիանալի երիտասարդություն ունենք, որը գիտի մեծի ու փոքրի տեղը, զգում է իր պատասխանատվությունն ու դերակատարումը երկրի վաղվա օրը կերտելու գործում: Նրա մի մասն այսօր-վաղը հրաժեշտ կտա դպրոցին, կյանք կմտնի: Շնորհավորենք վերջին զանգի կապակցությամբ, ցանկանանք նրանց բազում ծրագրերի իրականացում:

■

«Գանձասարը» առաջնությունը հափեց չորրորդ հորիզոնականում

Հայաստանի ֆուտբոլի 2015-2016թթ. առաջնությունը մայիսի 22-ին հատեց վերջնագիծը: Կապանի «Գանձասարն» ընդունել էր Երեւանի «Բանանցին»: Չնայած կողմերի գործադրած ջանքերին՝ դարպասները մնացին անառիկ, գրանցվեց ոչ ոքի՝ 0:0: Առաջնության վերջնամասում «Գանձասարը» պայքարում էր մրցանակային երրորդ տեղի համար, որը բացի բրոնզե մեդալներից, հնարավորություն էր տալիս ձեռք բերելու Եվրալիգայի գավաթի խաղարկությանը մասնակցելու իրավունք: Բայց մրցաշրջանի ավարտից մեկ տուր առաջ երրորդ տեղում ընթացող «Փյունիկը» անհասանելի դարձավ «Գանձասարի» համար: Խաղավարտից հետո թիմերի ավագները հանրապետության օրիներգի հնչյունների ներքո իջեցրին առաջնության դրոշը: Առաջին անգամ ֆուտբոլի հանրապետության չեմպիոն դարձավ «Ալաշկերտը», երկրորդ տեղը զբաղեցրեց Գյումրու «Շիրակը»:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Նշվեց թանգարանների միջազգային օրը

Արդեն 11 տարի է, ինչ Հայաստանը միացել է «Թանգարանային գիշեր» համաեվրոպական միջոցառմանը, որ սովորաբար անցկացվում է մայիսի 18-ին նշվող Թանգարանների միջազգային օրվան հաջորդող ամենամոտ շաբաթ օրը: Այս անգամ այն համընկավ մայիսի 21-ին եւ «Թանգարանները եւ մշակութային լանդշաֆտները» խորագիրն էր կրում: Կապանի երկրագիտական թանգարանը միջոցառմանը ներկայացավ բրոնզե եւ քարեդարյան ու ավելի ուշ ժամանակաշրջանին առնչվող ցուցադրանքով, որ կարելի էր խորագրել՝ «Կապանը՝ հնագույն ժամանակներում»:

Ինչպես նշեց թանգարանի տնօրեն Գրիշա Սմբատյանը, ցուցադրանքի մեծ մասը 1993 թվականից հետո չէր ցուցադրվել՝ քարեդարյան աշխատանքային գործիքներ, բրոնզեդարյան ժամանակաշրջանի ամենատարբեր ցուցանմուշներ՝ զարդեր, զենքեր, աշխատանքային գործիքներ, ամենատարբեր իրեր՝ հմայիլներ, ծիսական նշանակության անոթներ, ավելի ուշ շրջանի կերամիկական արվեստի նմուշներ՝ ջնարակված անոթներ, սպասք: Ըստ Գրիշա Սմբատյանի՝ Կապանում պեղումներ մասնակիորեն են կատարվել, պատմական արժեքները բացահայտվել են հողաշինարարական աշխատանքների ժամանակ տարբեր անհատների կողմից:

Այցելուների պակաս չունեցավ նաեւ Կապանի Շ.Մովսիսյանի անվան պատմության թանգարանը, որ հանդես եկավ «Հայաստանի երրորդ հանրապետությունը 25 տարեկան է» ցուցահանդեսով:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Աշխատանքի տեղավորելու պատրվակով երկու տասնյակից ավելի քաղաքացիներից պահանջել եւ ստացել է տարբեր չափի գումարներ

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունում հարուցվել են քրեական գործեր՝ աշխատանքի տեղավորելու պատրվակով 21 քաղաքացուց գումար հափշտակելու դեպքերի առթիվ: Կասկածյալը ձերբակալվել է:

Նախնական քննության տվյալներով՝ Սյունիքի մարզի բնակիչ, մասնագիտությամբ բժիշկ Մ.Քարամյանը, 2015 թվականի դեկտեմբերից մինչեւ 2016 թվականի մարտն ընկած ժամանակահատվածում նույն մարզի 21 բնակիչների վստահությունը չարաշահելով, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունում աշխատանքի ընդունելու պատրվակով, խաբեությամբ հափշտակել է տարբեր չափի գումարներ: Աշխատանքի տեղավորելու համար տարբեր անձանցից պահանջել եւ ստացել է տարբեր չափի գումար՝ 100 հազարից մինչեւ 729 հազար դրամ:

21 դրվագներով հարուցված քրեական գործերը միացվել են մեկ վարույթում, եւ ձեռնարկվում են անհրաժեշտ քննչական գործողություններ՝ բազմակողմանի, օբյեկտիվ եւ լրիվ քննությունն ապահովելու համար: Կասկածյալը մայիսի 16-ին ձերբակալվել է:

Ծանուցում. Ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՀՀ քննչական կոմիտե
17 մայիսի 2016թ.

Անդրանիկի եւ Էրգրի ժողովրդի ժառանգորդների ու հետնորդների դասը շարունակվում է...

Նրբագծեր Խնուսի եւ Սասնո ծագումով Մինասյան տոհմի դիմանկարին

Էրգրի մասին կարոտն ու հիշողությունը փորփրում է բոլորի սրտերը: Քուն թե արթմնի մենք հոգեպես, հոգեւոր բոլոր աղերսներով կապված ենք մեր սիրասուն Էրգրի հետ: Եվ մեզ համար առավել հոգեկից ու հարազատ են նրանք, ովքեր գալիս են Էրգրի ակունքներից, ովքեր միշտ ու մշտապես հիշեցնում են մեզ հայրենական կորուսյալ աշխարհի մասին: Հայ մտավորականների մեջ կա մի տոհմ եւս, որը սերում է Էրգրից եւ ուղնուծուծով ներկայացնում է այդ հոգեհարազատ անկորնչելի աշխարհը՝ Մինասյանների տոհմն է դա: Այդ տոհմի զավակներից առնվազն երկուսը՝ Էդիկ եւ Արծվիկ Մինասյանները դարձան շատ ճանաչված, հեղինակավոր մարդիկ մեր հանրապետությունում: Նրանց հասցեին հնչում է միայն դրական՝ ակնածանքով եւ օրհնանքներով լի խոսք: Ովքեր ճանաչում են, շփումներ են ունեցել Մինասյան տոհմի հետ, այլ կերպ չեն կարող դատել, այլ վերաբերմունք չեն կարող ունենալ: Օրհնյա՞լ է այս տոհմի անցած ուղին ու ներկա օրը:

Արեւմտահայաստանի սիգապանծ լեռներում ապրող նրանց տոհմը հավերժ կմնար իր հողին՝ հայրենական սրբություններին հավատարիմ, եթե չլիներ հայի բախտն այսքան դժնդակ, եւ եթե տեղի չունենար հայ ժողովրդի մեծագույն ողբերգությունը՝ ցեղասպանությունը: Թուրքական յաթաղանն իր սեւ գործն արեց: Մեծ եղեռնի մեջ ողջակիզվեցին միլիոնավոր հայեր: Մինասյան գերդաստանը եւս կորուստներ ունեցավ:

Պատմական Խնուսից եւ հերոսական Սասունից են սերվել Մինասյանների գերդաստանի ճյուղերն ու ճյուղակտորները: Արեւմտահայաստանի անզուգական այդ երկրամասերի հողը, օդն ու ջուրն են սնուցել նրանց հոգին ու արյունը: Մինասյան գերդաստանից նույնպես զինվորներ ու զորականներ ծնվեցին եւ բարձրացան դեպի Էրգրի անմատչելի բարձունքները: Նրանք նույնպես սուլթան Համիդի բռնապետությանը կռիվ հայտարարողների մեջ եւ կռվողների շարքում էին: Իսկ կռիվն, իրոք, անողոք էր, աննահանջ, անընդմեջ: Այդ կռվի մեջ էր որոշվում հայության լինել-չլինելու ապագան: Մինասյան Էդիկի պապը՝ Պողոս Մինասյանը՝ նույն ինքը Կալե անունով առյուծասիրտ ֆիդային, մարտնչել է թուրք թշնամու դեմ՝ հերոս Անդրանիկի առաջնորդությամբ:

Ասել կուզի, որ Կալեն Անդրանիկ զորավարի զինվորն է եղել, խորապես նվիրվել է թե իր զորավարին, թե իր հայրենի երկրի ազատագրության գործին: Հետագա ողջ իր կյանքում՝ Կալեն՝ Մինասյան տոհմի նահապետ Պողոսը, պահպանեց բարոյական հավատարմությունն ու ապրեց Անդրանիկի զինվորը լինելու անբիծ հպարտությամբ: Անդրանիկի զինվոր լինելը մեծ պատիվ ու հպարտություն էր Մուշի եւ Սասունի հայության համար: Զորավարն իր սխրալից կյանքով վաղուց պատվի, խիզախության եւ հերոսականության չափանիշ էր դարձել: Անդրանիկի թողած մեծ խիզախումի եւ Էրգրի ժողովրդի ժառանգորդների ու հետնորդների դասը շարունակվում է մինչ այսօր եւ շարունակվելու է ընդմիշտ: Լուսանկարներ են պահպանվել Մինասյանների արխիվում, որտեղ նաեւ իրենց քաջակորով պապն է, Կալեն՝ զինակից հայդուկների հետ: Սակայն հայ ֆիդայու, հայ ազատամարտիկի մղած կռիվն անհավասար էր ու ապարդյուն: Հերոսապետ Անդրանիկն ու իր զինվորներն ու զինակիցները չկարողացան տապալել թուրքական բռնակալությունը եւ ազատագրված տեսնել ու պահել Արեւմտյան Հայաստանը: Ֆիդայական շարժումն ավարտվեց անարդյունք: Առաջին համաշխարհային պատերազմը, որին մասնակից եղան հարյուր հազարավոր հայ զինվորներ, նույնպես ազատագրություն չբերեց բազմաչարչար հայությանը: Ողջ մնացած ֆիդայիների մի մասն անցավ Արաքս գետի ռուսական ափը, որտեղ արդեն խորհրդային իշխանություն էր հաստատվել: Այստեղ ծնվեցին, հասակ առան նախկին ֆիդայու թոռներն ու ծոռները: Այստեղ՝ Արեւելահայաստանում, Մինասյան գերդաստանը բնավորվեց Թալինի շրջանի լեռնոտ, քարքարոտ հողերի վրա, որը շատ բաներով հիշեցնում էր կորուսյալ Էրգրի հողն ու ջուրը: Գարեգին Մինասյանը՝ Կալեի որդին, Խորհրդային Հայաստանում ամուսնացավ իր համերկրացի Լուսիկի հետ: Ամուր ընտանիք ձեւավորվեց, որտեղ ծնվեցին, հասակ առան ութ առողջ ու շնորհյալ մանուկներ: Այստեղ Մինասյանները եւս լավ տուն-տեղ, բեղմնավոր կենսագրություն ստեղծեցին: Եվ շարունակեցին ազգաշահ ու ազգօգուտ գործունեությունը, ինչպես որ Էրգրում էր: Մեծ, բազմանդամ ընտանիքի գոյությունը Մինասյան գերդաստանի ակամա պատասխանն էր, լավագույն պատասխանն ընդդեմ թուրք ցեղասպանների ծրագրած դիվային ոճիրի: Ի հեճուկս արյունարբու սուլթանների ու երիտթուրքերի, ահա հայկական այս տոհմիկ գերդաստանը փախչելով դժոխքի վերածված Էրգրից, թուրքից ու մահմեդականներից ազատագրյալ այս հողակտորի վրա նոր, բազմանդամ ընտանիքի, բազմազավակ տան հիմքերը գցեց եւ իր արդար աշխատանքով, վաստակած քրտինքով շեն ու շռայլ օջախ կառուցեց: Գարեգինը տիկնոջ հետ օրնիբուն լծված էր ֆիզիկական ու մտավոր ստեղծագործ աշխատանքի, որով անհրաժեշտ ամեն ինչ ստեղծվում էր զավակների հիանալի կրթվածության ու զարգացածության համար:

Թալինցիների կողմից այնքան սիրված, մարդասեր ու մարդամոտ, ազգասեր ու հայամեծար Գարեգին Մինասյանն իր բարի, առաքինի, ազնիվ վարքագծով արժանացել էր համընդհանուր հարգանքի ու վստահության: Նա միշտ հպարտ է եղել իր ուսյալ, բարեկիրթ, արդարամիտ զավակներով, հավատացել նրանց վառվռուն ու հուսադրող ապագային: Թալին լեռնաշխարհում բոլորի կողմից սիրված քեռի Գարեն (այդպես էին նրան մտերմաբար դիմում) իր ուժերի առավելագույն ջանքերով ու նվիրումով ամեն ինչ արել էր զավակներին փայլուն կրթության ու կրթվածության հասցնելու, նրանց հայ հասարակության բանիմաց ու հույժ պիտանի այրեր դարձնելու եւ դաստիարակելու համար:

Ութ զավակներ՝ Պետիկ, Էդիկ, Քաջիկ, Մանուկ, Փառանձեմ, Աշխեն, Կորյուն, Արծվիկ (զավակներից երկուսը՝ Յուրիկը եւ Մանուկը մահացել են մանուկ հասակում), ստացան ցանկալի մասնագիտական բարձրագույն կրթություն եւ անցան համապատասխան աշխատանքի: Մինասյան գերդաստանի զավակներից յուրաքանչյուրն իր բնագավառում դարձավ բանավիճելի հեղինակություն, լավ մասնագետ ու բարձր քաղաքացի: Ցավոք եւ ի դժբախտություն զավակների, ընտանիքի հայրը՝ Գարեգին Մինասյանը (զավակների հրաշալի, անխոնջ դաստիարակը, բարձր քաղաքացին ու պետական պաշտոնյան) կյանքից վաղ հեռացավ: Կինը՝ ութ զավակի մայր տիկին Լուսիկը՝ նրբաճաշակ, գրագետ հայուհին, երջանկություն ունեցավ տեսնելու իր բոլոր զավակներին ամուսնացած, տուն-տեղ դրած: Ծնվեցին գերդաստանի սիրասուն թոռնիկներն ու ծոռնիկները: Մինասյանների նորանոր ճյուղերով բազմապատկված գերդաստանն ապրում էր բուռն անձնական ու աշխատանքային եռուզեռով, որոնք բազմաբովանդակություն էին հաղորդում նրա առօրյային: Ուրախ օրերի ու պահերի թիվը շատ էր՝ ծնունդ, կնունք, խնջույքներ, նշանդրեք, հարսանիք…

Նաեւ երկրի բոլոր ուրախություններով եւ հոգսերով էր ապրում Մինասյանների տոհմը:

Եվ այդ օրերի մեջ, օրերից մի օր եկավ բաղձալի պահն ու ժամը՝ Հայաստանի անկախությունը: Մինասյան տոհմի որդիներն ու դուստրերն ազնիվ զգացումներով, եռանդով ու հպարտությամբ լծվեցին հայոց պետականության վերականգնման եւ նորովի կայացման գործին: Նրանցից Կորյունն ու Մանուկը կռվեցին Արցախյան ազատամարտի առաջին գծում: Դրանով իսկ Մինասյան տոհմն Արցախում պաշտպանում էր հայրենի եզերք, դեպի Խնուս, Մուշ եւ Սասուն տանող ճանապարհը, որին այնպես նվիրված ու հավատացած են իրենք, եւ որն անպայմանորեն իրականություն է դառնալու օրերից մի օր:

Այդ ճանապարհը նրանք մոտեցնում են ամեն օր ու ամեն ժամ: Մոտեցնում են ե՛ւ բարոյապես, ե՛ւ ֆիզիկապես: Մոտեցնում էին կրտսեր եղբայրները՝ Կորյունն ու Մանուկը՝ զենքը ձեռքին կռվելով Արցախ ներխուժած քոչվոր ելուզակների դեմ:

Էդիկ Գարեգինի Մինասյան (1956, հունիսի 27, Ոսկեթաս, Արագածոտնի մարզ), պատմական գիտությունների դոկտոր (2003), պրոֆեսոր (2005):

Մոտեցնում են Էդիկ ու Արծվիկ Մինասյան եղբայրները, ովքեր իրենց ուսանողներին, ընթերցողներին եւ ընտրողներին միշտ ու մշտապես ներշնչելով մեծ սերն ու նվիրումը դեպի պատմական բնօրրանը, դեպի իրակա՛ն ու կենդանի՛ Արեւմտահայաստանը:

Արծվիկ Մինասյանն այսօր մեծ ճանաչման ու հարգանքի է արժանացել ամբողջ հանրապետությունում իր բուռն, կրքոտ հայրենասիրության եւ բաց ճակատ համարձակության համար: Արդեն մի քանի անգամ ընտրվել է ՀՀ ԱԺ պատգամավոր: ԱԺ բարձր ամբիոնից միշտ բարձրաձայնել է ժողովրդի, հասարակ հայ մարդու հոգսերի ու մտահոգությունների, ազգային եւ համազգային խնդիրների մասին: Բարձրաձայնել է այնպիսի եռանդով ու կրքոտությամբ, այնպիսի համարձակությամբ, որ զարմանք ու հիացում է պատճառել իր հայրենակիցներին:

Պետիկը տասնամյակներ շարունակ ազնիվ նվիրումով աշխատել է երկրի ժողտնտեսության տարբեր ճյուղերում, արժանացել աշխատանքային կոլեկտիվների անվերապահ վստահությանն ու հարգանքին:

Գարեգին Մինասյանի ընտանիքի դուստրերը եւս հասարակական եւ ազգօգուտ, բուռն ու բերքառատ գործունեությամբ են զբաղված: Փառանձեմ Մինասյանը համալսարանական կրթություն ստանալուց հետո պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, քիմիական գիտությունների թեկնածու է, գիտական աշխատանք է կատարում ԵՊՀ քիմիայի եւ դեղագործության ֆակուլտետում եւ դասավանդում Գյուղակադեմիայում: Մյուս դուստրը՝ Աշխենը՝ նույնպես երեք երեխայի մայր, ավարտել է Երեւանի պետհամալսարանի աշխարհագրական ֆակուլտետը, ամուսնացել եւ բնակություն է հաստատել Քարակերտում եւ շուրջ երեք տասնամյակ մանկավարժական գործունեություն ծավալել տեղի միջնակարգ կրթօջախում:

Անցած տարի՝ 2015թ. նոյեմբերին, Մինասյանների գերդաստանում պատահեց մեծ դժբախտություն: Կյանքից հեռացավ նրանց սիրասուն Լուսիկ մայրիկը: Այո՛, դա մեծ ողբերգություն էր այդ տոհմի համար, քանզի Լուսիկ մայրիկն իրենց կյանքի, լույսի խորհրդանիշ էր ամեն առումով եւ բոլոր կերպերով:

Եվ Էրգրի մարդիկ, որ իջել էին Թալինի շրջանի Ոսկեթաս գյուղից (Մինասյանների պապենական գյուղը) եւ այլ բնակավայրերից, կարծես, ողբում էին նորից իրենց հայրենի օջախների եւ հարազատների կորուստը, որը տեղի էր ունեցել կոտորածների ու ջարդերի տարիներին: Ժողովուրդն Էրգրի հողից ու ջրից ծնված ու սնված մի բեկոր՝ բարության պտղունց բեկոր, հույսի եւ հավատի մի նշույլ էր հանձնում, պա՞հ տալիս հողին: Դա իսկական ժողովրդական ողբերգություն էր: Լուսիկ մայրիկի կերպարը միշտ կապրի ու կմնա նրանց սրտերում: Վիշտը ժամանակի մեջ ու ժամանակի ընթացքում կսպիանա, եւ Մինասյան տոհմը նորից հույսն ու հայացքը բեւեռված կպահի հարազատ, թանկից էլ թանկ ու սիրասուն Էրգրին:

Հայ-թուրքական սահմանին մերձ գտնվող, այսինքն՝ իրականում մեր կորուսյալ հայրենիքի թիկունքին հենված Շենիկ համայնքի հորիզոնից երեւում են… Էրգրի անմատչելի լեռնագագաթները՝ ոչ միայն Սիսն ու Մասիսը, այլեւ Սասնո բարձունքները՝ Անդովկը, Մարութա սարն ու Ծիրն կատարը: Շենիկից երեւում է ողջ Սասունը, Խնուսը, Մշո դաշտը…

Եվ մի օր, օրերից մի օր, Էրգրի արեւով, հույսով ու հավատով ապրող, շնչող Մինասյան տոհմի թոռներն ու ծոռները զենքով եւ ոգով կհասնեն պատմական ու պապենական հայրենի հողին եւ հավերժ կապրեն ու կարարեն հայրենի բնօրրանում…

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Երեւան-Շենիկ-Երեւան

Վերջին դասը՝ ցուցամոլության խորհրդանիշ

«Այն, ինչ այսօր տեղի է ունենում դպրոցական ավարտական երեկույթների կազմակերպման ժամանակ, պարզապես ցուցամոլություն է. ծնողներն ու երեխաները ոչ թե ուրախանում են, այլ մտնում են անառողջ մրցակցության մեջ, որն առկա է մեր հասարակությունում՝ սկսած Ամանորից վերջացրած հարսանիքներով», - դպրոցներում ավարտական երեկոյի եւ տնօրենների նվերներ գնելու նպատակով դրամահավաքի մասին վերջին հրապարակումներից մեկում նշել է ՀՀ ԿԳ նախարար Լեւոն Մկրտչյանը:

ՀՈՎԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Սյունիքի մարզպետարանի կրթության վարչության պետ

Թերեւս հարցի քննարկումը սկսենք այս կետից: Սյունիքի մարզում այս տարի դպրոցին հրաժեշտ կտա 1325 շրջանավարտ: Հարցին, թե ինչ ասել է դրամահավաքություն դպրոցում, մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Հովիկ Ալեքսանյանը պատասխանեց, որ դա դպրոցին ոչ հարիր երեւույթ է: **«Ուսումնական հաստատության մասին խոսելիս պետք է միայն հարցեր առաջանան կրթության որակի հետ կապված, բայց հատկապես ուսումնական տարվա ավարտին ակտիվանում են խոսակցությունները վերջին զանգի միջոցառումները կազմակերպելու հետ կապված դրամահավաքության (տնօրենի, ուսուցչի համար նվեր գնելու, այդ միջոցառումը շատ ծոխ անցկացնելու համար եւ այլն) մասին, ինչը վարկաբեկում է դպրոցի անունը»**, – նշեց վարչության պետը:

Այն, որ վերջին զանգը կամ, ինչպես արդեն մի քանի տարի անվանում են, վերջին դասը վերածվել է շատ ընտանիքների համար ծախսատար միջոցառման, բոլորը կարող են փաստել: Բայց այս հարցը բարձրաձայնելիս մենք մոռանում ենք մի կարեւոր հանգամանքի մասին. իսկ ո՞վ է «պարտադրողը». ծնո՞ղը, թե՞ դպրոցը: Այսօր հասարակության մեջ միայն շրջանառվում է այն խոսակցությունը, որ շրջանավարտի համար ծախսվել է այսքան գումար՝ շատ հաճախ այդ ամեն ինչը կապելով միայն դպրոցի անվան հետ: Այնինչ, դպրոցի տնօրենական եւ ուսուցչական կա՞զմն է պարտադրում, որ շրջանավարտներն այդ օրը մի քանի զգեստ փոխեն, աղջիկները վարսահարդարման եւ դիմահարդարման համար կլորիկ գումար ծախսեն, ռեստորաններում ճոխ երեկույթներ կազմակերպեն եւ այլն:

Հարցի պատասխանը, կարծում ենք, միանշանակ բացասական է: Այս ամենը մեծ մասամբ ծնողների ցանկությունն է, մրցակցելը մեկը մյուսի հետ: Կրթության նախարարը, վարչության պետը, տնօրենը կամ ուսուցիչն ինչո՞վ են մեղավոր, որ մեր ազգը տառապում է ցուցամոլությամբ, հարեւանից հետ չմնալու նպատակով պարտքերի տակ ընկնելու մոլուցքով:

Իհարկե, չենք բացառում դեպքերը, երբ շատ տնօրեններ ու ուսուցիչներ, մոռանալով իրենց իսկական առաքելության մասին, որոշում են նվերների բնույթը կամ իրենց հատկացվելիք գումարի չափը, առաջարկում, թե որ ռեստորանում պիտի անցնի ավարտական երեկույթը եւ այլն: **«Սրանք արատավոր երեւույթներ են, որոնց բացահայտման դեպքում նրանք կպատժվեն խստագույնս: Ուսուցիչը պետք է ցուցաբերի համեստության եւ ինքնասիրության բարձր մակարդակ, այդպիսի մանր քայլերով չփչացնի երեխաների տոնը, զսպվածության եւ զգոնության կոչ անի»,** – նշեց Հ.Ալեքսանյանը:

Բանը հասել է նրան, որ շատ դպրոցներում դրամահավաքության մեղադրանքի ծանր բեռան տակ չընկնելու համար արգելել են ուսուցիչներին նույնիսկ ծաղիկ նվիրել, ինչը ծայրահեղության հերթական քայլն է: **«Ուսուցչին ծաղիկ նվիրելն արգելելու մասին չէ բնավ խոսքը, բայց այդ ծաղիկ նվիրելը նույնպես հաճախ ցուցամոլության են վերածում. ամեն ինչ պետք է համեստ կազմակերպվի»,** – նշեց վարչության պետը:

Նրա խոսքով՝ վերջին դասը շրջանավարտի համար պետք է խորհրդանշի նոր կյանքի սկիզբ, յուրօրինակ ամփոփում լինի նախորդ 12 տարվա ընթացքում ստացած գիտելիքների: Հաշվի առնելով ապրիլյան իրադարձությունները՝ վարչության պետն առաջարկել է այդ միջոցառումները կազմակերպել հայրենիք-հայոց այբուբեն-հայոց լեզու-հայկական մշակույթ-հայ առաքելական եկեղեցի-հայոց բանակ-հայ զինվոր սխեմայով:

«Ճիշտ չէր լինի շրջանավարտներից խլել իրենց մանկության եւ պատանեկության շրջանի ամենահիշարժան օրը տոնական դարձնելու իրավունքը, ուստի որոշեցինք համաքաղաքային միջոցառում եւս կազմակերպել, բայց առանց ավելորդ ճոխությունների: Բացի դրանից՝ հաշվի առնելով նախորդ տարիներին այդ օրերին տեղի ունեցող դժբախտ պատահարները՝ հրահանգել ենք այդ օրը երեկույթներ չկազմակերպել ռեստորաններում: Քննական շրջանի ավարտից հետո միայն շրջանավարտները կարող են խնջույքներ կազմակերպել: Ինչ վերաբերում է մեքենաներ վարելուն, ավելորդ աղմուկ բարձրացնելուն, ապա բոլորս պիտի գիտակցաբար վերաբերվենք այդ հարցին՝ չմոռանալով մեր երկրում առկա իրավիճակի մասին», – նշեց Հ.Ալեքսանյանը:

Դե իսկ բարեմաղթանքը ստացած գիտելիքներով, ստեղծած մշակույթով եւ արժեհամակարգով մեր երկիրը շենացնելն է: Հասնենք նրան, որ վերջին դասը չհավասարեցվի դրամահավաքությանն ու ավելորդ ճոխություններին: Կարծում ենք՝ մեր վերջնական նպատակը պիտի լինի այն, որ սոցիալական տարբեր խավերի ներկայացուցիչներն այդ օրը տոնեն միահավասար պայմաններում՝ առանց թերարժեքության կոմպլեքսի ձեւավորման: Աստիճանաբար փոխենք մեր արժեհամակարգը՝ առանց միակողմանի մեղադրանքներ ներկայացնելու եւ համեստության սահմաններում. չէ՞ որ համեստության մեջ ավելի շատ գաղտնիքներ կան թաքնված:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Խոնարհվում ենք նրանց առաջ...

Կապանի Բաղաբերդ թաղամասում (Բաղաբերդի 9 հասցեում) դեռեւս տարիներ առաջ՝ 1992-94թթ. Արցախյան ազատամարտում զոհված թաղամասի ինը ազատամարտիկներին նվիրված հուշաղբյուրը, նրա հարակից տարածքն ու զրուցարանը դեռեւս 2015թ. աշնանը ցանկություն էր հայտնել վերանորոգված ու բարեկարգ տեսնել Արմեն Գասպարյանը (Մակիչ)՝ չպատկերացնելով, որ հուշատախտակին կավելանա նաեւ իր անունը:

Մայիսի 17-ին՝ Մակիչի մահվան քառասուներորդ օրը, Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանի նախաձեռնությամբ եւ «ԶՊՄԿ» ՓԲԸ աջակցությամբ բարեկարգված հուշաղբյուրի առաջ եւ նրա հարակից տարածքում ցավի ու հպարտության զգացումները միախառնվել էին: Հուշատախտակի ինը զոհված ազատամարտիկների անունների շարքին, ցավոք, ավելացավ նաեւ Մակիչի անունը:

Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Հեբոյանը հոգեհանգստյան արարողություն կատարեց եւ նշեց, որ այսուհետ այս հուշաղբյուրին մոտենալիս մեր աղոթքը կբարձրացնենք առ Աստված թե՛ մեր ժողովրդի եւ թե՛ մեր զոհված հայորդիների հոգու անդորրության, ինչպես նաեւ մեր երկրի խաղաղության եւ անսասանության համար:

Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը ելույթի խոսքում մասնավորապես նշեց, որ իմացյալ մահով նահատակված հերոսների անունները մատաղ սերնդի դաստիարակության խորհրդանիշներ են: 1988թ.-ից մինչ այսօր Սյունիքը հայ ժողովրդի համար հպարտանալու անկյուն է, իսկ սյունեցիները՝ հերոսներ, որոնց գործը պատվով շարունակում է նաեւ այսօրվա սերունդը: Հավերժ փառք մեր հերոսներին եւ համբերություն ու հպարտություն նահատակվածների ընտանիքներին:

Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Գրիգոր Թադեւոսյանը նշեց, որ 24 տարի առաջ կառուցված հուշաղբյուրը, որ նվիրվել էր Արցախյան ազատամարտում զոհված Սեյրան Բաղդասարյանի հիշատակին, դարձավ նաեւ այդ ընթացքում զոհված բաղաբերդցիների հիշատակի վայր, եւ այսուհետ այստեղ հարգանքի տուրք կմատուցվի բոլոր այն սյունեցի հայորդիներին, ովքեր իրենց կյանքը տվեցին հանուն մեր երկրի ամբողջականության եւ սահմանների պաշտպանության:

Միջոցառմանը գեղագիտական երանգ հաղորդեցին Կապանի թիվ 6 հիմնական դպրոցի սաները՝ իրենց խոնարհումի խոսքը հասցնելով մեր հերոսներին...

Մարզային եւ քաղաքային իշխանության ներկայացուցիչները, Մակիչի մարտական ընկերներն ու հարազատները, բազում կապանցիներ ծաղիկներ դրեցին հուշաղբյուրին, որից հետո այցելեցին Բաղաբուրջի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու զոհված տղաների հիշատակին:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

Մահացել է Համլետ Միրզոյանը

2016թ. մայիսի 21-ին մահկանացուն կնքեց Համլետ Հրաչիկի Միրզոյանը:

Ծնվել է 1952թ. մայիսի 21-ին, Գորիս քաղաքում: 1969թ. ավարտել է Գորիսի թիվ 2 միջնակարգ դպրոցը, ապա՝ Երեւանի բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը (1976թ.):

Ավարտելուց հետո մինչեւ 1984թ. աշխատել է Գորիսի շրջանային հիվանդանոցում, այնուհետեւ՝ մինչեւ 1991թ., եղել է Զանգեզուրի դերմոկոլոգիայի դիսպանսերի գլխավոր բժիշկ:

1991թ. հիմնադրել է Գորիսի ախտորոշման կենտրոնը, որը ղեկավարել է մինչեւ 1996 թվականը:

1996-98թթ. ղեկավարել է նորաստեղծ Սյունիքի մարզպետարանի առողջապահության եւ սոցիալական պաշտպանության վարչությունը:

1998-1999թթ. Երեւանի քաղաքապետարանի առողջապահության վարչության պետի տեղակալն էր: 1999-ին նշանակվել է Երեւանի թիվ 8 բուժմիավորման տնօրեն:

2001-2003թթ. ղեկավարել է Երեւանի քաղաքապետարանի առողջապահության վարչությունը, որից հետո նորից գլխավորել Երեւանի 8-րդ բուժմիավորումը:

Համլետ Միրզոյանն աշխատանքային գործունեության ողջ ընթացքում աչքի է ընկել առողջապահության բնագավառի հմուտ կազմակերպչի ու ղեկավարի որակներով՝ արժանանալով համընդհանուր հարգանքի ու վստահության:

Համլետ Միրզոյանը ստեղծել է օրինակելի ընտանիք, ունի երկու զավակ:

Առողջապահության բնագավառի նվիրյալ, Սյունյաց աշխարհի արժանավոր զավակ Համլետ Միրզոյանի հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտերում:

Մի խումբ ընկերներ

ՎԱՃԱՌՎՈՒՄ է 1 սենյականոց բնակարան (ձեւափոխված երկու սենյակի)՝ Հունան Ավետիսյան 1ա հասցեում, 53 քառ. մետր մակերեսով, 9-հարկանի շենքի 8-րդ հարկում. վիճակը՝ բարվոք: Հեռ.՝ (093) 889 717, (0285) 5 26 28:

ՎԱՃԱՌՎՈՒՄ է 2 սենյականոց բնակարան, 76.35 քմ ընդհանուր մակերեսով: Հասցե՝ ք.Կապան, Մելիք-Ստեփանյան 4, 3-հարկանի շենքի 2-րդ հարկ: Ստալինյան նախագիծ, գազիֆիկացված է, վիճակը՝ բարվոք: Զանգահարել՝ (094) 766 425:

ՎԱՃԱՌՎՈՒՄ է 3 սենյականոց բնակարան: Հասցե՝ ք.Կապան, Մուշեղ Հարությունյան 10, 9-հարկանի շենքի 5-րդ հարկ: Զանգահարել՝ (094) 421 400:

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63,**
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 4 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1720, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 25.05.2016թ.: